



ԱՆԱԿԻՏ

ՀԱՆՐԻՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ԴԵՏԵՄԲԵՐ 1902

ԹԻԻ 12

ԲԱՐԷՉ

« Խօսք » եւ « Լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Ցաւիտեանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եթէ հոգին չճարգամանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

ՀԱՆՊԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Ուսումնասիրելը բոլորեց իւր վեշտասաներորդ տարին ու կը մտնէ եօթնեւտասներորդը : Այս ժէ չըջանին առթիւ՝ բարեկամներէն թերթիս տարածումը կը խնդրուի, իսկ ազգայինները կը հրաւիրուին բաժանորդագրութեան :

«ա նդէս Ամսօրեայ» ամսագիրը պիտի հրատարակուի կանոնաւոր, ամէն ամսոյ սկիզբը, նոյն ծրագրով եւ ուղղութեամբ, աւելի ճօխ ու բազմակողմանի :

Ուսումնասիրելիս բովանդակութիւնն էր եւ պիտի մնայ Հայութեան կամ հայ ազգին վերաբերեալ նիւթեր, — ուսումնասիրութիւններ : Պիտի ծանուցանէ այն ամէն ազգային եւ օտար ազգի (ի մասնաւորի գերմ.) գիտական բանասէրներուն հմտալից եւ հետաքրքրական գրքերն ու գրութիւնները, որ կը հային հայ-ուսման, հայ-բանասիրութեան, հայ-գրականութեան, հայ-լեզուին, հայագիտութեան, — հայ-ազգին : Անաչառ քննադատութեան պիտի ենթարկէ հայ ազգին անցեալն ու ներկան — հայ պատմութիւնը : Պեղումներէ, արձանագրութիւններէ եւ ձեռագիրներէ հանուած հայ-հնագիտութիւնն ու հայ-հնախօսութիւնը մեծ տեղ պիտի գրաւեն : Նոյն չափով պիտի մշակուին հայ-մատենագրական, մատենախօսական եւ աշխարհագրական ճիւղերը : Պիտի հրատարակէ հայ ականաւոր եւ գրագէտ անձնաւորութեանց կենսագրութիւնները — կենդանագիրներով : Պիտի ջանայ հայ գրքերու կամ կարեւոր նոր հրատարակութեանց վրայ (նոյն իսկ թարգմանածոյ) որ թերթիս իբր նուէր կ'առաքուին, քննադատական համառօտ կամ ընդարձակ անդեկութիւն տալ : Երբեմն երբեմն ատանց խորութեան թերթի եւ թերթի, հայ մամուլ կամ հատածներու վրայ քննադատական տեսութիւններ պիտի երեւան, եւն, եւն : Ինչպէս թերթիս ներքինը՝ նմանապէս արտաքինն — ծածկ — ալ Հայութիւն պիտի բուրէ, հայ լրագրաց ազգային նիւթոց բովանդակութիւնը, գրական ծանուցումներ, թղթակցութիւնք, եւն :

Այն գրութիւնները կամ թարգմանութիւնները որ ո եւ է կերպով առնչութիւն չունին հայ-ազգին, հայ-աշխարհին, հայ-գրականութեան հետ՝ չեն հրատարակուիր :

Տարեկան գինն է՝ 10 ֆրանք կամ 4 ռուպլի՝ կանխիկ :
 ասցէ՝ Rédaction de la revue «Handess Amsorya», VII/2 Mechitharistengasse, Vienne (Autriche)

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՔ «ԱՆԱՇԻՏ»Ի.—Թ. 1

**ՆԱՀԱՊԵՏ
 ՔՈՒՉԱԿԻ
 ԳԻՒԱՆԸ**

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ, ԽՐԱՏԱԿԱՆ ԵՒ ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ
 ԵՐԳԵՐ. ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԵՐ

ԲՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԸ ԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՄԸ
 Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ե Յ
 ԱՐՇԱԿ ՉԵՊԱՆԵԱՆ

Գին. — հասարակ թղթի վրայ՝ 3 ֆր.
 «քուշէ» » » 5 »

Գինի փափաքողները պէտք է դիմեն «Անահիտ»ի խմբագրութեան, կամ մեր գործակալներուն, զինք կանխիկ վճարելով :

«ՎԱՉԳԵՆ ԵՐԳԱՐԱՆ»

Գինի փափաքողները պէտք է դիմեն՝
 M. L. Koranian, 379 P. O. Box,
 LYNN, Mass.
 U. S. A.,

Գին՝ Ամերիկայի համար մէկ ու կէս տուար, արտասահմանի համար՝ 7 ֆրանք, Պարսկաստանի համար՝ 6 ֆր.

Լինջի «ԱՐՄԵՆԻԱ» ԻՆ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Թարմանեց անգլերէնից՝ Պ. Տօնապետեան

Գինի փափաքողները պէտք է դիմեն՝
 Mr. Donabedian, 117 Godolphin Road,
 Shepherd's Bush, LONDON, W.

Գին 3 ֆր. 60 (1 ռուբլի 25).

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1902

ԹԻԻ 12

ՄԻ ԱՌԱՋԱՐԿ

Մենք վաղուց յայտնած ենք զանազան շքր-
ջաններում այն միտքը թէ մենք Հայերս մի
այնպիսի հիմնարկութիւն պիտի կազմենք ինչ-
պէս «Սիոնիզմ»ն է, միայն այն տարբերու-
թեամբ որ մեր հիմնելիք ընկերութիւնը չպիտի
ունենայ «քաղաքական» խոշոր ձգտումներ
ինչպէս ունի «սիոնիզմ»ը: Այժմ որ զանազան
զաւանթեանց Հայերն այլեւս խորշում են
կրօնական խտրութիւններով բաժանելուց
և ցանկանում են ունենալ մի ընդհանուր
ազգային սկզբունք՝ այն է ազգի բարոյական,
մտաւոր ու նիւթական յատկագրութիւնը,
հարկաւոր է ստեղծել մի հիմնարկութիւն որ
ընդհանուր նշանակութիւն ունենայ ամեն զա-
սակարգի և կուսակցութեան Հայերին համար
և որի կեդրոնատեղին լինի Պարիզ, որտեղ կան
բաւականաչափ Հայեր և ուր մեր յայտնի բա-
րեգործ Մանթաշեան հիմնում է Հայոց եկեղեցի:

Այդ նոր ընկերութեան նպատակն պէտք է
լինի օժանդակել այն ամէն բանին որ ձգտում
է Հայոց ազգի գրութիւնը բարձրացնել, օգնել
որբերին, հիմնել ուր հարկաւոր է ամէն
տեսակ ուսումնարաններ երկու սեռի, զարգա-
ցնել մեր թատրոնը և մեր գրականութիւնը,
օգնել հայ գրողներին և Հայոց զատը պաշտ-
պանողներին, ևւն:

Մեր անմահ Մերենցն ասեմով ամէն տեղ քա-
րողում էր թէ Հայերը պիտի մէկ ազգային
սնտուկ ունենան Անգլիայում, որի կարեւորու-
թիւնն նա գուշակում էր, և զա արդարեւ
զգալի եղաւ Տաճկահայոց կոտորածներից յա-
ռաջացած ազէտների ժամանակ: Այժմ այդ
հարցն աւելի հասունացած է և զգալի ամենու-

րեք: Այժմ ամենայարմար վայրկեանն է հիմ-
նելու մի ընկերութիւն «Սիոնիզմ»ի նման, որ
զանազան արժէքի ակցիաներ արձակէ, որ-
պէս զի ամէն մի հայ կարող լինի մասնակցել
իր նիւթական գրութեան չափովը: Մենք վըս-
տահացած ենք որ մի այդպիսի գանձարանի հիմ-
նարկութիւնը սիրով կ'ողջունուի բովանդակ
հայ հասարակութիւնից, ազգատը կտայ նրան
իր լուծման և հարուստը թէ՛ իր կենդանու-
թեան և թէ՛ իր կտակի մէջ նրան բաժին կը
հանէ իւր կարողութիւնից:

Այդ հիմնարկութիւնն ստեղծելն արդէն,
ինչպէս յիշեցինք, հասունացած հարց է դառել,
և նա մեծ նշանակութիւն կարող է ունենալ
որովհետեւ նա պիտի մեծապէս նպաստէ վաւ
պահել Հայի յատուկ բարեգործական ձգտում-
ները և այդ ձգտումներին իրականացմանը
կայալ աւելի կազմակերպեալ և աւելի տեսա-
կան ձեւ, և գուցէ զա իրանց թմրութիւնից,
եսասիրութիւնից, օտարամոլութիւնից զար-
թեցնէ մեր հարուստների մի ստուար մասը:

Եթէ հայ ազգն մնացել է ցայժմ, զա նրա
բուռն կրօնական զգացմունքի շնորհիւ է եղել,
և այդ զգացմունքն՝ իբրև իսէալ՝ ստիպել
է նրան անթիւ անհամար վանքեր և եկեղե-
ցիներ կառուցանել, և նրան կարող է արել
անթիւ անհամար տառապանքների տոկալ ու
մնալ կանգուն՝ ի զարմանս լուսաւորեալ ազ-
գերի Ուրեմն եթէ ի հնուամի ընդհանուր կրօ-
նական սկզբունք եղել է բարոյական նեցուկ
ազգին, որ և նրա շնորհիւ մնացել է հին
նգօրական ազգերի միջից կենդանի, ապա ու-
րեմն պահելով և պահպանելով հանդերձ մեր
յարգանքը զէպ ի այդ հին սկզբունքը՝ պիտի
ստեղծել այժմանկուլտուրական աւելի զժուար
մրցման դիմանալու համար մի ժամանայարմար

նեցուկ : Եւ այդ նեցուկն կարող է լինել մի հայ ընկերութիւն «Սիոնիզմ»ի կազմով . եւ զուտ կուլտուրական ծրագրով : Դրան անշուշտ կ'աջակցին եւ մեր օտարազգի բարեկամները : Դուք է կը զարմանաք եթէ ասեմ որ Վրացիք, համեմատաբար աւելի աղքատ, բայց բարոյապէս աւելի հարուստ, մեզանից աւելի բան կ'անեն յօգուտ իրանց ազգի վերածնութեան : Նոյա համար Վրաց պոետականների բանկն մեծ բաներ կ'անէ, պահելով թատրոն, ուսումնարաններ, օգնելով գրողներին, եւն իսկ մենք զուրկ ենք այդ ամէն բանից, որովհետեւ չունինք մի այդպիսի ցանկալի հիմնարկութիւն : Ես կարծում եմ թէ մեր բարեգործ հարուստները ամենամեծ ազգային եւ թէ մարդկային բարեգործութիւն արած կը լինէին, եթէ հիմնէին մի հայկական բանկ՝ Պարիզում, որի նպատակն լինի ազգի մտաւոր, բարոյական ու նիւթական յառաջգրմութիւնն : Թէ ի՞նչ հիմունքների վրայ պիտի կազմած լինի այդ հիմնարկութիւնն, թէ ի՞նչ արժողութեամբ ակցիաներ պիտի արձակեն որ ամէն մի Հայի մատչելի լինի, զրա մասին թող խորհին մեր ֆինանսադէտներն ու առեւտրականները, մանրամասնաբար ուսումնասիրելով Հրէից Սիոնական բանկն եւ նրա նման հիմնարկութիւնները : Մենք պարտք ենք համարում այս առաջարկութիւնն անել, եւ մողթում ենք որ ձեռնհաս անձինք բազմակողմանի քննութիւն անելուց յետոյ անյապաղ գործադրեն այս գաղափարը :

ՌՌՒՍԱՀԱՅ

ՀԱՅՆ ՈՒ ՀՐԷԱՆ



Ազգային դանձարանի մը հաստատման գաղափարը, զոր վերեւ հրատարակուած յօդուածին մէջ կ'առաջարկէ «Ռուսահայ», շատ զեղեցիկ գաղափար մըն է : Չեմ զարմանար որ Մերկնց, այդ տարրերնապէս հեռաանս գործիչը, որ արդէն յղացած եւ առաջարկած էր ամէն ինչ որ անհրաժեշտ է մեր ապագային համար, — այդ գաղափարնալ յղացած եւ առաջարկած ըլլայ : Բայց դժբաղդաբար յղանալը հերիք չէ : Պէտք է յղացուած իրականութեան փոխել : Ատոր համար անհատական ճիգը չի բաւեր, — բաց ի այն պարագայէն ուր այդ ճիգը կը կրթնի անհատական խոշոր գումարի մը վրայ : հարկաւոր է հաւաքական համախոհութիւն եւ զործակցութիւն : Հարկաւոր է նաեւ գործելու պայծառ ու զիտակից մեթոտ մը : «Ռուսահայ» կ'առաջարկէ՝ իբրեւ օրինակ որուն կարելի է հետեւիլ՝ Սիոնականներու պանքան :

Պէտք է ուրեմն նախ որոշապէս գիտնալ թէ ի՞նչ պայմաններու մէջ ի՞նչ ձեւով ծնած է Սիոնականութիւնը եւ ի՞նչ եղած է մինչեւ այսօր անոր գործունէութիւնը : Այդ մասին ամենէն որոշ տեղեկութիւնը տալու համար հայ հասարակութեան . կը թարգմանեմ այստեղ կարեւորագոյն հատուածը գրքոյկի մը զոր վերջերս հրատարակած է Սիոնականութեան գլխաւոր կազմակերպիչներէն մին, Տր . Մաքս Նորտաու, եւ որ ինքնին արդէն մեծապէս հետաքրքրական է իբրեւ ամփոփ պատկերացում մը ժամանակակից ընկերական-պատմական ամենէն զեղեցիկ ու յուզիչ շարժումներէն մէկուն :

«Սիոնականութիւնն ըստ նոր անուանակոչութիւնն է հին բանի մը : յանի որ կը նշանակէ այն բազմանոցը զոր հրէայ ժողովուրդը ունի Սիոնը վերստին տեսնելու : Յորմէհեաէ Տիաու երկրորդ աստարը կործանեց, յորմէհեաէ հրէայ ժողովուրդը ամէն երկիրներու մէջ ցրուեցաւ, այդ ժողովուրդը անդադար խանդավառօրէն բաղձացած ու հասաւտապէս յուսացած է հայրենի երկիրը վերագտնալ : Հրէաներուն այդ կարօտն ու յոյսը Սիոնին համար, թանձրացեալ ձեւը, կարելի է ըսել՝ աշխարհագրական երեւոյթը դարձած է Մեռային գալտեան վրայ իրենց հաւատքին, որ իրենց կրօնքին էական մասը կազմած է :

«Իբօք, Մեսիականութիւնն ու Սիոնականութիւնը երկու հազար տարուան ընթացքի մէջ՝ համանման յղացումներ եղան, եւ խճճմանք ու նանրաբանութիւն միայն ըրած կ'ըլլայ մարդ՝ Հրէից կրօնական երգեցողութեան մէջ խոստացուած Մեսիային գալուստին վերաբերող աղօթքները զատելով այն աղօթքներէն որ կը վերաբերին պատմական հայրենիքն վերագործին՝ որոնց նուազ խոստացուած էր Դեռ քանի մը սերունդ առաջ, բոլոր Հրէաներն այդ աղօթքները բառական իմաստով կը մեկնէին, ինչպէս մինչեւ ցարդ միամիտ հաւատքը պահած Հրէաները զայն կը մեկնեն դեռ : Ուրիշ ոչինչ զիտէին օրկից գատ, թէ իրենք ժողովուրդ մըն են որ իր հայրենիքը կորսնցուցած է՝ ի պատիժ իր գործած մեղքերուն, օտար երկիրներու մէջ իբր օտար ապրելու դատապարտուած, եւ թէ իրենց չարչարանքները պիտի վերջանային միայն այն ատեն երբ վերստին հաւաքուէին նախահայրերու աշխարհին նուիրական հողին վրայ :

«ԺՐ. գարու կէսին, երբ ազատախոհութիւնը սկսաւ Հրէութեան մէջ թափանցել՝ գլխաւորապէս ժողովրդական փիլիսոփայ Մովսէս Մեհտելսոնի աշխատութիւններուն շնորհիւ, այս կացութիւնը փոխուեցաւ :

«Հրէաներու հաւատքը թուլցաւ . ուսեալ անձերը, եթէ պարզապէս չնախընտրէին քրիստոնէութեան յարիւլ, սկսան բանավարական

եղանակով մը մեկնել իրենց կրօնքին վար-
 գապետութիւնները իրենց աչքին՝ հրէայ ժո-
 ղովուրդին ցրուածը անյեղլի եւ վերջնական
 իրողութիւն մըն էր օմեսիական եւ սիոնական
 յղացումները զտեցին ո եւ է թանձրացեալ պա-
 րունակութենէ, իրենց համար շտկրտելով տա-
 րօրինակ վարդապետութիւն մը որու համե-
 մատ Սիոն վերագարձին խոստումը պէտք էր
 մեկնել միայն հոգեւոր տեսակէտով, իրրեւ
 հրէական միաստութեան հաստատումը
 ամբողջ աշխարհիս մէջ, ինչ որ պիտի իրա-
 կանացնէր հրէայ բարոյագիտութեան ապագայ
 յաղթանակն ուրիշ ազգերու նուազ բարձր,
 նուազ ազնիւ սկզբունքներուն վրայ:

« Մենտելսոնի վարդապետութիւնը արամա-
 բանօրէն զարգացաւ ժի՛ զարու ստաջին կէտին,
 եւ «բարենորոգում» ձեւն առաւ, որ սիոնակա-
 նութեան հետ վճռապէս ամէն կապ խզեց:
 «Բարենորոգեալ» Հրէային համար, Սիոն բառը
 այնքան քիչ նշանակութիւն ունի որքան
 ցրում բառը. ան չ'ընդունիր թէ ինքն ալ
 «Տիասփորայ»ին մէջ կը գտնուի, կ'ուրանայ
 հրէայ ժողովուրդի մը գոյութիւնը, կ'ուրանայ
 թէ ինք անոր կը պատկանի, ուզելով միայն
 այն ժողովրդին պատկանիլ որուն մէջ կ'ապրի:
 Իրին համար, Հրէութիւնը պարզապէս կրօ-
 նական յղացում մըն է, ազգայնութեան մը հետ
 ոչ մէկ աւրնչութիւն չունեցող: Ս.յն երկիրն
 ուր ծնած է, իր հայրենիքն է. ուրիշ հայրե-
 նիք չ'ուզիր ճանչնալ: Պաղեստինը տեսնելու
 վարկածը իրեն գայրոյթ կամ ծիծաղ կը պատ-
 ճառէ: Ու կը կրկնէ հանրածանօթ ապուշ կա-
 տախարանութիւնը՝ «եթէ հրէական պետու-
 թիւնը վերահաստատուի, ես պիտի առաջար-
 կեմ որ անոր Փարիզի դեսպանն ըլլամ»:

« Ժամանակ անցնելով, մտածող Հրէաները
 հարկաւորաբար պիտի նկատէին սակայն թէ
 Հրութեան «բարենորոգումը» կէս-դարման մըն
 է, որ՝ ինչպէս ամէն կէս-դարման՝ իր մէջ իսկ
 կը պարունակէ իր քայքայման սերմը, քանի
 որ վայրկեան մը չի դիմանար տրամաբանական
 քննադատութեան մը: Բարենորոգեալ Հրէու-
 թիւնը որո՞ւ պիտի կարենայ զոհացում տալ:
 Հաւատացեալ Հրէային: — Ան կը մերժէ գայն
 ամենախորին զոհանքով: Ոչ-հաւատացեալին՝
 Ան կ'արհամարհէ գայն իրրեւ կեղծաւորու-
 թիւն մը եւ իրրեւ սուտի շղարկրատութիւն
 մը: — Իր ժողովուրդին անցեալին հետ ամէն
 կապ իրօք խզել եւ իր քրիստոնեայ շրջապա-
 տին հետ ձուլուել ուզող Հրէային: Ս.յդ
 Հրէային՝ բարենորոգեալ Հրէութիւնը չի բա-
 ւեր, որովհետեւ ան աւելի առաջ կ'երթայ,
 կ'առնէ այն քայլը որ զինքը մկրտութեան ա-
 ւազանին կ'առաջնորդէ: Իսկ այն Հրէան որ
 կ'ուզէ Հրէութիւնը կորուստէ ֆեզիլ եւ իրրեւ
 ցեղային անհատականութիւն պահպանել, ա'լ
 աւելի քիչ կը համակրի անոր: Ս.յդպիսիին հա-
 մար, ո եւ է սզգային յոյսէ հրաժարումը հոմա-
 նիշ է հրէայ ժողովուրդին թերեւս յամբ բայց

ապահով մահուան դատապարտութեանը՝ իր
 բերնովն իսկ արտասանուած:

« Բարենորոգեալ Հրէութիւնը՝ առանց սիո-
 նականութեան, այսինքն առանց հրէայ ժողո-
 վուրդին մէկ նոր միացման բաղձանքին՝ ու
 յոյսին, ապագայ չունի: Առ առաւելն գայն կա-
 ընելի է նկատել իրրեւ քիչ մը դարձուածաւոր
 ճամբայ մը քրիստոնեացման առաջնորդող: Եւ
 այդ նպատակին հասնիլ ուղղին առջեւ աւելի
 շիտակ եւ աւելի կարճ ճամբաներ կան այսօր:

« Այն սերունդներուն որոնք Մենտելսոնի,
 բարենորոգման եւ ձուլման վարդապետութեանց
 ճոռմարանութեան ու բանավարականութեան
 ազդեցութիւնը կրած էին, ժի՛ զարու վերջին
 հինգերորդին մէջ յաջողեց որիշ սերունդ մը
 որ սիոնական հարցին հանդէպ աւանդական
 դիրքէն տարբեր դիրք մ'առնել կը ջանայ:
 Ս.յս նոր Հրէաները ուսելնին կը թօթվեն
 հարիւր տարիէ ի վեր մտաւ դարձած բարե-
 նական-գրական շաղփաղփանքին առջեւ որ կը
 քարոզէ թէ «Հրէութիւնը առաջելութիւն մը
 ունի», առաջելութիւն զոր կատարելու համար
 Հրէաները պէտք է որ միշտ ցրուած ապրին
 ուրիշ ժողովուրդներու մէջ, որպէս զի բարո-
 յականի ուսուցիչ ու օրինակ ըլլան անոնց,
 զանոնք սատիճանաբար առաջնորդին դուռ բա-
 նավարականութեան, մարդոց տիեզերական եզ-
 րայութեան, իտէալական աշխարհաքաղաքա-
 ցիութեան մը: Մենք այդ ցնորական տաքե-
 լութիւնը լրբութիւն մը եւ տիւմարութիւն մը
 կը նկատեն: Աւելի համեստօրէն, աւելի իրա-
 պաշտօրէն, անոնք կ'ուզեն որ հրէայ ժողո-
 վուրդը իրաւունքն ունենայ ապրելու եւ դաջ-
 զանալու, իր բնական ընդունակութեանց հա-
 մեմատ, մինչեւ բնական սահմանն իր ախ-
 պարին: Անոնք ստիպուած են ընդունիլ թէ
 այդ բանը անհնար է ցրուած Հրէաներուն
 համար, քանի որ, արդի պայմաններուն մէջ,
 նախապաշարուածներ, ատելութիւն ու արհա-
 մարհանք զիրենք կը հարածին, կը կեղեքեն,
 իրենց զարդացումը կ'անդամալուծեն եւ պի-
 րենք կը բռնազատեն միմտութեան մը
 որով փոխանակ իրենց գոյութեան իրաւունքն
 ունեցող ինքնատիպ էակներ ըլլալու՝ անոնք
 կը դառնան օտար տիպարներու միջակ կամ
 յոյս ընդօրինակութիւններ: Ս.յս պատճառով
 է որ այդ նոր Հրէաները մեթոտականօրէն
 կ'աշխատին հրէայ ժողովուրդը վերստին բնա-
 կանօն ժողովուրդ մ'ընելու, որ իր հոգին
 վրայ ապրի, քաղաքակիրթ ազգի մը տնտեսա-
 կան, մտաւորական, բարոյական ու քաղաքա-
 կան բոլոր պաշտօնները կատարէ:

« Ս.յս նպատակին անկարելի է ամբիջապէս
 հասնիլ: Անոր իրականացումը պիտի տեղի
 ունենայ առաւել կամ նուազ հեռաւոր ապա-
 գայի մը մէջ: Իտէալ մըն է, բաղձանք մը,
 յոյս մը, ինչպէս էր եւ է գեւ մեսիական սիո-
 նականութիւնը: Միայն թէ, նոր սիոնակա-
 նութիւնը, զոր քաղաքական սիոնականու-

թիւն կ'անուանենք, կը տարբերի էին, կրօնական, մեծիական սիոնականութենէն անով որ ուր է միասնականութիւն չ'ընդունիր, Պաղեստին վերադարձը հրաշքէ մը չ'սպասեր, այլ կ'ուզէ զայն պատրաստել իր անձնական ճիգերովը :

« Նոր սիոնականութիւնը մասամբ միայն ծնած է հրէայ ժողովրդին ինքնաբեր մղումներէն, նոր եւ ո՛սեալ Հրէաներուն իրենց պատմութեան, իրենց մարտիրոսագրութեան համար ունեցած խանդավառութենէն, իրենց ցեղին յատկութեանց արժէքին իրենց մէջ արթնցումը գիտակցութենէն, հինաւուրց կոճղը կորուստէ փրկելու եւ անոր անվերջ ապագայ մը պատրաստելու, իրենց նախահայրերուն սխրագործութեանցը վրայ իրենց յաջորդներուն սխրագործութիւններն աւելցնելու փառասիրութենէն. մասամբ՝ սիոնականութիւնը երկու արտաքին մղումներու արդիւնքն է, նախ՝ ազգայնութեան զգացումը որ ամբողջ կէս դար եւրոպական մտածումներուն ու զգացումներուն տիրապետեց եւ համաշխարհային քաղաքականութիւնն առաջնորդեց, երկրորդ՝ հակասեմականութիւնը, որմէ առաւել կամ նուազ տառապած են ամէն երկրի Հրէաները :

« Ազգայնութեան զգացումը բոլոր ժողովուրդներուն տուաւ իրենց ինքնութեան զգացումը, անոնց սորվեցուց իրենց մասնաւորութիւններն իբրեւ յատկութիւն նկատել, եւ անոնց ներշնչեց անկախութեան խանդավառ բաղձանքը : Այդ զգացումը չէր կրնար ուսեալ Հրէաներուն վրայէն սահիլ անցնիլ՝ առանց հետք ձգելու : Ան բռնադատեց զանոնք իրենց վրայ մտածել, զիրենք վերստին նկատել, — բան մը որուն վարժութիւնը կորսնցուցած էին, — իբրեւ մասնաւոր ժողովուրդ մը, եւ իրենց համար պահանջել բնականոն կեանք մը, Դիրքը այն ազգերուն որ զանոնք օտար տարր մը նկատելով անոնցմէ կը զատուէին եւ առանց ուր է քաղաքավարութեան կամ չափաւորութեան ի վեր կը հանէին զիրենք Հրէաներէն բաժնող իրական կամ երեւակայական հակապատկերները կամ պարզապէս տարբերութիւնները, կը նպաստէր անոնց ազգային անհատականութեան վերակառուցման ցաւազին աշխատութիւնը զիւրացնելու :

« Ազգայնական զգացումը, չափազանցութեան հասնելով, այլասերած է այսօր, շուրթնութեան մէջ մոլորած, տխմար օտարացեցութեան մը մէջ ստորնացած, ծիծաղելի ինքնաստուածացման մը մէջ ապուշցած : Հրէայ ազգայնականութիւնը այդ վաւերացման հարակից հանդամանքէն դերձ է : Հրէայ ազգայնականը մեծամոլութեան ախտին ենթակայ չէ. կը զգայ ընդհակառակն թէ անդադրում ջանքեր պարտի բնել՝ հրէայ անունը պատուոյ տիրոջ մը դարձնելու համար : Համեստօրէն կ'ընդունի ուրիշ ժողովուրդներու յատկութիւնները, եւ եռանդալին կը ջանայ զանոնք իւ-

րացնիլ՝ այն չափով որով անոնք կը ներդաշնակուին իր բնական տրամագրութեանց հետ : Կը զգայ այն ահաւոր աւերումները զոր իր երկարատեւ ստրկութիւնը, դարերով օրէնքէ արտաքսուած մնալը գործած են իր նկարագրին վրայ որ ի սկզբան խրոխտ էր եւ շխտակ, եւ կը ջանայ ինքզինքը բուժել բարոյական խիստ մարգանքով մը : Արդ, երբ ազգայնականութիւնը զգուշանայ զառաժանումներէն, այլ եւս ուրիշ բան չի ներկայացներ բայց եթէ փուլ մը բընաշրջութեան, որ բարբարոս ու եսական անհատականութեան մեկնելով, կը յանգի ազատ մարդկութեան եւ այլասիրութեան, փուլ որուն օրինաւորութիւնն ու հարկաւորութիւնը այն միայն կրնայ ուրանալ որ բան մը չի հասկընար գործարանաւորական բնաշրջութեանէն եւ որ ոչ մէկ պատմական զգացողութիւն չունի :

« Հակասեմականութիւնն ալ մղած է շատ մը ուսեալ Հրէաներ զէպ ի իրենց ժողովուրդը դարձի ճամբան գտնելու : Ան կղած է ծանր փորձութիւն մը, որուն չեն կարող տոկալ տկարները, բայց որմէ ուժովները աւելի հղօր դուրս կ'ելլեն կամ գոնէ իրենց ուրոյն ուժին աւելի գիտակից :

« Ծիշող չէ ըսել թէ սիոնականութիւնը յոխորտանքի ժեսթ մը եւ կամ յուսահատ հակազգացութիւն մըն է հակասեմականութեան դէմ : Անշուշտ, շատ մը ուսեալ Հրէաներ հակասեմականութեան պատճառով է որ եկած են վերստին կապուիլ Հրէութեան, եւ նորէն պիտի զատուէին անկից եթէ իրենց քրիստոնեայ հայրենակիցները իրենց հետ դարձեալ բարեկամաբար վարուէին :

« Բայց սիոնականներու մեծ մասին մէջ, հակասեմականութիւնը ուրիշ բան չէ կղած բայց եթէ այն հարկադրումը որ զիրենք ստիպեց ուրիշ ժողովուրդներու հետ իրենց ունեցած յարաբերութեանց վրայ խորհե ու, եւ իրենց խորհրդածութիւնը զիրենք առաջնորդեց արդիւնքներու որոնք իրենց մտքին ու զգացմանց մէջ տեսականօրէն պիտի մնան, նոյն իսկ եթէ հակասեմականութիւնը բոլորովին անհետանայ աշխարհէս :

« Յայտնի է թէ սիոնականութիւնը, այնպէս ինչպէս զայն ցարդ սահմանեցինք, ուսեալ եւ ազատ Հրէաներու հրէական զարգացեալ դասակարգին սիոնականութիւնն է : Տգէտ զանգուածը հինաւուրց աւանդութիւններու կապուած, սիոնական է առանց շատ խորհրդածելու, զգացումով, բնազդով, առապայանքով ու բաղձանքով : Ծատ յտակ զազափար մ'ունի այն նըպատակին վրայ որուն պէտք է հասնիլ, այսինքն ազգային միութեան, բայց ո՛չ այն ճամբաներուն վրայ որոնց պէտք է հետեւիլ հոն հասնելու համար : Սակայն արդէն ըմբռնած է անձնական ճիգերու հարկը, եւ անդին տարբերութիւն մը կայ գործօն կազմակերպութեան մը համար իր ունեցած տրամագրութիւնն-

րուն զոնասիրութեանը եւ զուտ կրօնական մեխականներուն փրկութիւնը ազօթքի մէջ միայն փնտոող կրաւորականութեան միջուկ :

« Նոր սիոնականութիւնը, կամ քաղաքական սիոնականութիւնը, ունեցած է կղզիացեալ նախակարապետներ որոնց առաջին ճիգերը ժԹ դարուն առաջին կէսէն իսկ են սկսած . 1840 թ առնենք, պերմանացի Հրէայ մը որ գրքին ախղոսին տակ իր անունը դնելու քաջութիւնն իսկ չունեցաւ, առաջարկեց Պաղեստինը ձեռք ձգել եւ Հրեաներն այնտեղ գաղթեցնել : Քանի մը զայրագին բողոքներ, ժամանակին հրէայ լրագիրներուն մէջ երեւցած (որոնք բոլորն ալ բարենորոգման եւ ձուլման դրօշին ներքեւ էին հաւաքուած), միակ արդիւնքը եղան այդ գործին :

« Աւելի ուշագրութիւն շնորհեցին Մովսէս Հեսի «Հոռո ու Երուսաղէմ»ին . այդ մարգարէական գիրքը, 1860ին հրատարակուած, հրէական ազգայնականութիւնը կը հռչակէր, ազատագրման ու եղբայրութեան գաղափարներուն գինովութեանը մէջտեղ . այդ գործը զայրոյթի ճշմարիտ մրբիկ մը յարոյց պերմանացի Հրէաներուն մէջ, որոնք հպիւ թէ զայն հաճած էին թղթատել, ու որոնք վերջին ծայր ուրախ էին իրաւունքներու հաւասարութեանէն որ դեռ նոր շնորհուեր էր իրենց : Ո՞րն է Իսրայէլի այն մարգարէն որ իր ժողովրդին զայրոյթը յարուցած չըլլայ . . .

« 1880ին մօտերը, արեւելեան Եւրոպայէ մէջ երեւան եկան տեսակ մը միջազգայնորոնք բրտօրէն սթափեցուցին Հրեաները իրենց դարէ մը ի վեր անուցած երազներէն եւ զանոնք իրականութեան գիտակցութեանը դարձուցին :

« Ռուսաստանցի Հրէայ մը, Տր . Փինսքըր, գրեց այն ատեն գրքոյի մը, «Սինքրապտաութիւն», որ նախերգանքն էր քաղաքական նոր սիոնականութեան որուն բոլոր մոթիֆները կ'ուրուագէր, առանց սակայն զանոնք համանուագորէն զարգացնելու : Այսու հանդերձ այդ գրքոյին արդէն կը պարունակէր սիոնականութեան էական սկզբունքները : Հրեաները միայն կրօնական խմբաւորում մը չեն, այլ եւ ազգ մը կը կազմեն : Կ'ուզեն, նորէն իբրեւ ազգ համախմբուելով, իրենց սեպհական երկրին մէջ ապրել : Իրենց վերանորոգումը պէտք է որ ըլլայ միանգամայն անտեսական, ֆիզիքական, մտաւորական եւ բարոյական :

« Փինսքըրի գաղափարները ցնցեցին ուսուիկէտներու եւ համալսարաններու հրէայ եւրիտասարդութիւնը : Սկսան հրէական ազգային ընկերութիւններ հիմնել : Քանի մը ուսանողներ որոնք օտար համալսարանները կը յաճախէին, իրենց նոր միջավայրին մէջ Փինսքըրի գաղափարները տարածեցին հոս ու հոն, մանաւանդ Վիեննայի մէջ, համալրութիւն գտան իրենց երիտասարդ հայրենակիցներուն կողմէ : Ռուրիչներ, գործը խօսքէն, օրինակը քարոզէն նախամեծար համարելով, իրենց ուսանողական

աշխատութիւնները թողուցին ու զաղթեցին Պաղեստին գիւղացիներ զանապու համար, հրէայ գիւղացիներ, հրէայ պատմական հողին վրայ : Լիանդավառութեան շատ մասնաւոր կաւրողութիւն մը ցոյց տուող այս հատընտիր երիտասարդներուն գաղափարապաշտութեանէն գրաւուած, նուազ բոցավառ գերմանացի ու ուսաստանցի Հրէաներ ընկերութիւններ կազմեցին հեռուէն օգնութեան հասնելու համար Պաղեստինի հրէայ ռաւիբրաններուն գաղթուորման գործին : Ասի կատարուեցաւ առանց միակերպ յատակազօր եւ առանց նպատակի եւ միջոցներու որոշ սահմանումի : Այդ ընկերութիւնները գիտակից չէին թէ սիոնականներուն ձեռովը կը զգային ու կը գործէին : Ձէին տեսներ Պաղեստինի մէջ հրէայ գաղութներ հաստատելուն եւ բովանդակ հրէայ ժողովրդին ապագային միջուկ գտնուող յարակցութիւնը : Ձիրենք ողբերգորդը, բնագրական յուզում մըն էր աւելի, որուն մէջ կը մտնէին ամէն տեսակ անորոշ զգացումներ, բարեպաշտութիւն, հնագիտական-պատմական զգայնութիւն, բարեգործութիւն, ցեղաբանական հպարտութիւն : Այսու հանդերձ, մտքերը պատրաստուած էին, օրին մէջ զգացումներ կը սաւառնէին, Հրէութիւնը հասուն էր կերպարանափոխութեան մը համար :

« Այն ատեն է որ, — ինչպէս ասի կը պատահի պատմական նմանօրինակ րոպէներուն, — երեւան եկաւ այն մարդը որուն տրուած էր յստակօրէն յղանալ շատերէ անորոշապէս նաւազգացուած մտածումները, բարձրաձայն արտասանել այնքան անձերէ սպասուած բառը : Այդ մարդը եղաւ Տր . Թէոտոր Հերձլ : 1896ի աշնան, հրատարակեց հակիրճ գիրք մը, «Հրէայ Տէրութիւնը», որուն մէջ կը հռչակէր, որոշութեամբ մը որ անձանօթ էր մրնչու այդ օրը, սա իրողութիւնը թէ Հրէաները ժողովրդ մըն են, ժողովրդի մը բոլոր իրաւունքներն ունենալ կը պահանջեն, եւ կ'ուզեն հաստատուիլ երկրի մը մէջ ուր կարենան ազատ եւ լիակատար քաղաքական կեանք մը վարել :

« «Հրէայ Տէրութիւնը» քաղաքական սիոնականութեան իրական մեկնակէտն է եղած : Մեկնակէտը, եւ ոչ թէ յատակազօրը : Հերձլի գիրքը դեռ կղզիացեալ անհատի մը ենթակայական գործն է, որ իր անուշուղբ միայն կը խօսի : Անոր շատ մը մանրամասնութիւնները ուրիշ բան չեն բայց եթէ գրականութիւն : Դիւրին չէ արդէն ամէն տեղ որոշապէս գծել ճշմարիտ սահմանը որ կը զատէ ընկերաբանին գիտական լրջութիւնը մարգարէական բանաստեղծին քմայքէն : Սիոնական յայտագիրը հաւաքական աշխատութիւն մը պիտի ըլլար, հիմնուած՝ անշուշտ՝ Հերձլի գրքին վրայ, անոր տեսութիւններէն ներշնչուած, բայց անոր բոլոր քմածին մանրամասնութիւնները մէկդի գնելով, միմիայն իրական աշխարհէն առնուած տարրերով յօրինուած :

« Հերձի գիրքը ողջունուեցաւ տասնհազարաւոր Հրէաներէ, գլխաւորապէս երիտասարդներէն, իւր փրկութեան որոշմնագիր մը: Ան սահմանուած էր, ոչ թէ մրտուած թղթի վիճակի մէջ մնալու, այլ գործնական ստեղծագործութեանց կերպարանափոխուելու: Ամենուրեք կանգնեցան նոր ընկերութիւններ, իրենց նպատակ ունենալով ոչ թէ Պաղեստինի մէջ աննշան գաղթեւորումը հրէական փոքրիկ խումբերու որոնք գողունի հոն պիտի սպրդէին, այլ պատրաստութիւնը Հրէաներու մեծազանգուած գաղթմանն ի Սուրբ Երկիր, հիմնուելով թուրք կառավարութեան հետ կանոնաւորապէս կնքուած եւ պետութիւններէն երաշխաւորուած զաշնագրի մը վրայ, որ պիտի ընդունի հրէայ գաղթականներուն ինքնավարութեան իրաւունքը:

« Քաղաքական սիոնականութեան նախախայրիքը հրէայ ժողովուրդի մը գոյութիւնը հաստատելն է քնակահարար: Եւ ճիշդ այդ է որ կ'ուզեն ուրանալ ձուլուած Հրէաները եւ իրենցմէ վարձուած խախտները, ինացականութենէ զուրկ շողոքորթ շաղակրատներ: Տր. Հէրձլ հասկցաւ թէ առաջին պարտականութիւնը զոր ունէր կատարելու, ցոյց մը կազմակերպելն էր որ աշխարհի առջեւ, եւ նոյն ինքն հրէայ ժողովուրդին առջեւ, պիտի ներկայացնէր, նոր ու գզալի ձեւով մը, հրէայ ազգային գոյութեան իրողութիւնը: «Սիոնական Համաժողով» մը գումարեց, որ հակառակ ամենէն մոլորիչ ընդդիմութեանց, ամենէն անխղճամիտ բռնաբարութեանց, տեղի ունեցաւ առաջին անգամ ի Պալ. 1897ի օգոստոսի վերջերը: Այդ Համաժողովը կը բաղկանար 204 պատգամաւորներէ զոր ընտրած էին երկու աշխարհներու սիոնական հրէաները:

« Բովանդակ աշխարհի երեսին՝ որ զինքը մտիկ կ'ընէր, առաջին սիոնական Համաժողովը հանդիսաւորապէս յայտարարեց թէ Հրէաները ժողովուրդ մըն են, եւ թէ չեն ուզեր ուրիշ ազգերու մէջ անհետանալ: Ինք իր վրայ պարտք դրաւ ազատմանն աշխատելու հրէայ ժողովրդին այն մասին որ, ամեն իրաւունքներէ զրկուած, կը մաշի թշուառութեան մը մէջ որուն արժանի չէ, եւ անոր աւելի երջանիկ ապագայ մը պատրաստելու: Համաժողովն իր ջանքերն ամփոփեց հետեւեալ յայտագրին մէջ, որ ամենամեծ խանդավառութեամբ միաձայնօրէն ընդունուեցաւ.

« Սիոնականութիւնը նպատակ ունի Պաղեստինի մէջ հրէայ ժողովուրդին համար ստեղծել հայրենիք մը՝ հանրային իրաւունքով երաշխաւորուած:

« Համաժողովն կ'առաջադրէ այս նպատակին հասնել՝ հետեւեալ միջոցներով.

« Ա. Արդիւնաւոր կերպով նպաստաւորելով հրէայ երկրագործներու, արհեստաւորներու

« եւ ճարտարագործներու Պաղեստինի մէջ հաստատումը.

« Բ. Բոլոր Հրէաները կազմակերպելով եւ «համախմբելով՝ տեղական ընկերութեանց եւ «ընդհանուր գաշնակցութեանց միջոցաւ, «այն չափով զոր կը ներեն օրէնքներն այն «երկիրներուն որոնց մէջ ատոնք պիտի հիմնուին.

« Գ. Հրէայ ժողովրդին արժանապատուութեան զգացումը եւ ազգային գիտակցութիւնը զօրացնելով.

« Դ. Նախապատրաստական դիմումներ ընելով՝ ստանալու համար կառավարութեանց «հուանութիւնը, որ հարկաւոր է սիոնական «նութեան նպատակն իրագործելու համար»

« Առաջին Համաժողովը, ցրուելէն առաջ, ստեղծեց միայուն կազմակերպութիւն մը: Ընտրեց «Մեծ Գործադիր Ժողով» մը, որուն մէջ իրենց ներկայացուցիչն ունին բոլոր այն երկիրները ուր քիչ շատ կարեւոր հրէայ բնակչութիւն մը կայ այդ գործադիր ժողովն ալ իր կողմէն հաստատեց միայուն յանձնաժողով մը, որուն պաշտօնատեղին է վիեննա, Հերձլի նախագահութեան տակ:

« Յաջորդ երեք տարիները, երեք ուրիշ Համաժողովներ ալ գումարուեցան, 1898ին եւ 1899ին, զարձեալ Պալի մէջ, յետոյ՝ 1900ին՝ Լոնտոն: Համաժողովի անգամներուն թիւը 1898ին բարձրացաւ 280ի, 1899ին 370ի եւ 1900ին 420ի:

« Իւրաքանչիւր նոր Համաժողովի, աւելի մանրակրկիտ կերպով կը հետեւէին ընտրութեանց կանոնադրութեան, աւելի խստութեամբ կը կատարէին իշխանութեանց վաւերացումը, եւ այժմ. Համաժողովը, որ Սիոնական Հրէութեան ամուր մէկ հաստատութիւնն է զարձած, եւ որ 1901ին գումարուեցաւ հինգերորդ անգամն ըլլալով նորէն Պալի մէջ, կրնայ իրաւացի կերպով ինքզինքը ներկայացուցիչը նկատել հարկը հազարաւոր ընտրողներու:

« Կ'ուզէ՞ք դիտնալ թէ Համաժողովին մէջ իրենց ներկայացուցիչներն ունեցող Հրէաներն ի՞նչ ըրած են ցարդ առաջին Համաժողովին մէջ հաստատուած յայտագրին իրագործելու համար. կը բաւէ նկատի առնել հետեւեալ իրողութիւնները.

« 1⁰. Արդիւնաւոր կերպով նպաստաւորելով « Պաղեստինի մէջ հրէայ երկրագործներու, « արհեստաւորներու եւ ճարտարագործներու « հաստատումը »:

« Սիոնականութիւնը որոշապէս արգիլած է ինք իրեն՝ Պաղեստինի մէջ փոքրաքանակ գաղթումն ու գողունի սպրդելը: Այդ պատճառով է որ Սիոնականները շատացած են Պաղեստինի մէջ արդէն գոյութիւն ունեցող հրէայ գաղթականութեանց ետանդուն ու անխոնջ փաստաբաններն ըլլալով՝ անոնց պաշտպաններուն մօտ որ կը թուէին վերջերս այլեւ անոնցմով չհետաքրքրուել. Սուրբ Երկրին մէջ պատրաս-

տած են զործարաններու հիմնարկութիւնը, որոնք բանուորներուն զործ պիտի հայթայթեն, եւ տարեկան նպաստով մը կ'ապահովին զոյութիւնը Եւֆոյի երբայական վարժապետանոցին որ դրամի պակասին պատճառով իր զրուները զոցելու վրայ էր: Սիոնականները կը հսկեն Պաղեստինի մէջ առաջին անգամ հիմնուած հրէական գաղթականութեանց պահպանմանն ու տեւականացմանը, մինչեւ որ կարելի ըլլայ մեծաքանակ գաղթեւորման հաստատումը ձեռնարկել:

« 20. Հրէաները կազմակերպելով եւ համա- « խըմբելով՝ տեղական ընկերութեանց եւ ընդ- « հանուր դաշնակցութեանց միջոցով »:

« Սիոնականները ունին մօտաւորապէս 1500 անդակաւ ընկերութիւններ որոնք շատ ուժեղ զործունէութիւն մը ցոյց կուտան: Իբրեւ բովանդակ Հրէութիւնն ընդգրկող ընդհանուր հաստատութիւն, սիոնականութիւնն ունի այդ սղոյթին ընկերութիւններէն կազմուած դաշնակցութիւնները, մեծ ու փոքր Գործադիր Ժողովը, եւ Համաժողովը, որ Վիեննայի մէջ կը պահէ մնայուն Գարտուղարութիւն մը: Սիոնական Հրէաները այս կազմակերպութեանց ծախքերը կը զոցեն տարեկան կամաւոր անդամովճարով մը, որ հրէական հին զբաղման անուանակոչութեամբ, «Շեքել» անունը կը կրէ: այդ անդամովճարը կը համապատասխանէ Ռուսիոյ մէջ 50 կոպէկի, արեւմտեան երկրներու մէջ՝ դրամական միութեան (1 մարք, 1 ֆրանք, 1 շիլլին, եւն): Շեքէլը վճարողը Համաժողովին մէջ քուէի իրաւունք կը ստանայ:

« Սիոնականութիւնն ունի պաշտօնական օրկան մը, դերմաներէն «Տի Վելթ» շարժաթերթը, որ Վիեննայ կը հրատարակուի: Սիոնականութեան գաղափարները ատկից զատ կ'արտայայտուին ու կը պաշտպանուին քառասունը չափ լրագիրներու մէջ, երբայց ցերէն, դերմաներէն, իտալերէն, անգլիերէն, ֆրանսերէն, եւ հրէայ-դերմաներէն, հրէայ-սպանիերէն խառնաբարբառով:

« Սիոնականութիւնը հիմնած է բազմաթիւ զպրոցներ, չափահասներու ուսուցման կազմակերպութիւններ, եւ վերջերս սկսած է իր յատուկ տեղն ունենալ հրէական հասարակութեանց վարչութեան մէջ, անոնց նիւթական հասոյթները գործածելու համար հրէական ուսուցման, դաստիարակման, մտաւոր մշակման գործին՝ աւելի մեծ չափով մը քան ինչ որ ցարդ եղած է պաշտօնական Հրէութեան թըմբած կամ որոշապէս հակազգայնական պետերուն ձեռքով:

3. « Հրէայ ժողովրդին անձնական արժանա- « պատութեան զգացումն ու ազգային գի- « տակցութիւնը զորացնելով »:

« Սիոնական ընկերութիւնները ամենուրեք իրենց պարտք կը համարին իրենց անդամներն ինչպէս եւ ընդհանրապէս բոլոր հրէայ զան-

գուածը իրենց ժողովրդին պատմութեան, եւ րայական սրբազան կամ աշխարհական դրականութեան հետ ընտելացնել, կը սորվեցնեն Հրէաներուն զլուխնին բարձր բունել, հպարտանալ իրենց ծագումով, արհամարհել հակասեմական սուտերը, զրպարտութիւնները, նախատինքները, կը ջանան բարեփոխել հրէայ «փրօլթարիա»ին առողջապահութիւնը, զայն անտեսապէս բարձրացնել ընկերութեան եւ համարաշխութեան միջոցով, սողոց դաստիարակութիւնն ու կիներու կրթութիւնը բարելաւել: Ու անող երիտասարդութեան կուտան նպատակ մը, իտէալ մը իրենց կեանքին համար: Կը քարոզեն անստգիւտ, հոգեկան կեանքի մը հարկաւորութիւնը, հեռացումը բիրտ նիւթապաշտութեանէն, որու մէջ շատ զիւրաւ կը տարուին կ'իջնան ձուլուած Հրէաները, կեանքերնուն մէջ իտէալ մը չունենալուն համար: Վերջապէս կը քարոզեն խիստ ինքնահակութիւն մը խօսքերու եւ գործերու մէջ: Կը հիմնեն մարմնամարդութեան ընկերութիւններ՝ շատոնց ի վեր անխնամ թողուած ֆիզիքական զարգացումը նոր սերունդին մըջ նպաստաւորելու համար: Հրէական պատմական աստիքու եւ տարեկարծի օրերու տօնախմբութեան նոր մղում մը կուտան: Յաճախ նոյն իսկ ինքզինքնին արտաքուստ ալ կը յայտնեն՝ նշան մը կրելով: Սիոնականը ամօթ չի համարիր իր ազգութիւնը բացէ ի բաց ջոյց տալը: Կ'ուզէ որ զինքը իբրեւ Հրէայ ճանչնան, եւ որովհետեւ միշտ առանց կեղծիքի կը վարուի, նմանողական կառակերպութիւն չի խաղար, ոչ մէկը չի ջանար խաբել իր ծագմանն ու ինքնութեանը մասին, ոչ մէկ տեղ չի սպրդիր իրենը չեղող դրօշի մը ներքեւ, իր քրիստոնեայ դրացիներուն եւ հայրենակիցիներուն հետ իր յարաբերութիւնը աւելի առողջ, աւելի ճշմարիտ, աւելի ուղղամիտ է, եւ աւելի արժանապատուութեամբ համակուած, քան ձուլուած Հրէաներունը, որոնք տաճանելի եւ սակայն անօգուտ ջանքեր կը թափեն իրենց Հրէութիւնը ծածկելու համար, ջանքեր որոնք զուգուի կը թուին քիչ մը ճաշակ ունեցող ո եւ է քրիստոնեայի:

« 40. Նախապատրաստական գիմումներ ընել- « լով՝ ստանալու համար կառավարութեանց « հաւանութիւնը, որ հարկաւոր է սիոնական- « նութեան նպատակին իրագործմանը համար»:

« Ամենահզօր կառավարութեանց մէկ քան իին տեղեկութիւն տրուած է՝ յուշագիրներով սիոնականութեան նպատակին վրայ, չեն պակաս ճանապարհից քաջաբերութիւններ եւ համակրութեան խոստմանից յայտարարութիւններ սիոնականութեան համար:

« Այժմ, Գործադիր Ժողովը կը ջանայ Տաճ- (charte) կառավարութեան նստանալ հրովարտակ կական մը Պաղեստինի բաց մնացած հողերուն վրայ Հրէաներ գաղթեցնելու եւ այդ երկրին բնական հարստութիւններն արժեցնելու համար: Այդպիսի հրովարտակի մը ստացումը

անհնար է առանց զրամական մեծ միջոցներու : Ելմտապէս զինուած ըլլալու համար այն միջոցին երբ Տաճկաստան պիտի շնորհէ այդ հրովարտակը, սիոնական երկրորդ Համաժողովը (1898) որոշեց հիմնել «Հրէական Գաղթականական Պանքան» (Jewish Colonial Trust) որուն կիզորոնատեղին Լոնտոն է : Այդ որոշումը գործադրուեցաւ հետեւեալ տարին, 1899ին : Պանքան ստեղծուած է : Անոր արդի զրամագլուխն է երկու միլիոն անգլիական օսկի : Ան գործել պիտի սկսի միայն այն ատեն երբ այդ շահաբաժնով զրամագլուխին մէկ ութերորդը, այսինքն 250,000 անգլիական օսկի վճարուած ըլլայ : Այս վայրկեանիս, այդ գումարը արդէն վճարուած է :

« Սիոնականութեան մէկ ուրիշ ելմտական գործիքը «Ազգային Գանձն» է (Fonds national) զոր հինգերորդ Համաժողովն ստեղծեց (1901), եւ որ պիտի կազմուի նուիրատուութիւններով եւ պիտի բարձրանայ 200,000 անգլիական օսկի : Այս գումարին կէսը պիտի գործածուի Պաղեստինի մէջ հողեր գնելու, միւս կէսը պիտի պահուի թրեւ հրէայ ժողովրդին անձեռնմխելի սեփականութիւնը, պիտի ածի մշտապէս՝ տոկոսներուն զրամագլխի վրայ բարձրուելով ու նորանոր նուիրատուութիւններով, եւ ծանր պարագաներու մէջ անոր տոկոսը պիտի գործածուի ազգին համար : »

Ահա ինչ է Սիոնականութիւնը : Վիթխարի կաղապարութիւն մը՝ ի սպաս վսեմ գաղափարի մը : Այդ գաղափարը անիրագործելի, երազական կը թուի շատերու . ես կը կարծեմ թէ ոչինչ անիրագործելի է, երբ ամբողջ ժողովուրդ մը կամ գոնէ ժողովրդի մը ամենէն աղնիւ, ամենէն ուժեղ ու առողջ մասը, իր բոլոր կամքը եւ ուժը կը նուիրէ ծրագրի մը իրականացմանը . ամէն մեծ ու նոր գաղափար նախ անիրագործելի եւ երազական թուած է կարճատեսներուն, բայց ամէն գաղափար որ աղնիւ, բնական եւ առողջ նպատակի մը իրականացման մը կը ձգտի՝ վերջ ի վերջոյ յաղթած է ամէն դժուարութեանց եւ իր կարելիութիւնը գործնականապէս ապացուցած է : Անհրաժեշտը՝ հաւատք ու կամք ունենալն է, եւ «գործել գիտնալը» : Հրէաներն այդ բոլորը ունին, եւ առատօրէն . իրենց ծրագրին զէմ ցցուող խոչընդոտները շատ խոչոր են եւ բազմաթիւ, բայց իրենց ծրագրերը բնական պէտքի մը կը համապատասխանէ, համաձայն է կեանքի հիմնական ու յաւիտենական օրէնքներուն, քանի որ ան կը ձգտի Հրէաները օտար երկիրներու մէջ խորթ վաւկի իրենց արդի զառն ու անբնական կացութենէն փրկել, պանոսք վե-

րահաւաքելով իրենց հինաւուրց հայրենիքի, մէջ եւ վերաստեղծելով հրէայ ազգութիւնը՝ իր ինքնուրոյն լեզուով ու կեանքով : Հակասեմականները, որոնք կ'ուզեն վտարել Հրէաներն այն երկրէն ուր անոնք հաստատուած են առանց բոլորովին ձուլուելու, պէտք էր որ ամենէն աւելի համակրէին սիոնական շարժման եւ աջակցէին անոր . բայց հակասեմականները որ միանգամայն կախողիկներ են՝ ամենամեծ մասամբ, ամենէն կատաղի հակառակորդներն են այդ շարժման . որովհետեւ կախողիկները կը նախընտրեն երուսաղէմը Մանսեականներու ձեռքը մնացած տեսնել՝ քան զայն Հրէաներու ձեռքն անցած տեսնելու համակրելի : Սակայն Եւրոպայի բողոքական եւ օրթոտոքս երկիրները աւելի համակիր կը թուին այդ ծրագրին, բողոքական երկիրներու վեհապետները մինչեւ ցարդ բարեկամական դիրք մը բռնած են հանդէպ Սիոնականութեան . եւ ուստի կառավարութիւնը, որ հեռու է հրէասէր ըլլալէ, կ'արտօնէ որ սիոնականութիւնը մասնաճիւղեր ունենայ Ռուսիոյ մէջ, եւ վերջերս թոյլ տուաւ Միւսսթի մէջ սիոնական Համաժողովի մը գումարումը : Կան մտածողներ թէ զրամով, դիւանագրտական ու կրթական միջոցներով միայն ազգութիւն մը յարուցանել անկարելի է, թէ ազգայնութեան մը վերահաստատումը արելուով միայն կարելի է յաջողցնել : Սիոնականութեան վարիչներն համոզուած են թէ պիտի յաջողին իրենց ծրագիրը իրագործել՝ լոկ խաղաղական միջոցներով . սա ալ ճշմարիտ է որ դեռ չեն կրնար արդէն, նոյն իսկ եթէ ուզեն, ոչ-խաղաղական միջոցներու դիմել, քանի որ դեռ ժողովրդին մեծամասնութիւնը հայրենիքէն հեռու է . իրենց համար, էականը՝ առ այժմ՝ հայրենի հողին վրայ վերադառնալու յաջողիլն է, եւ ատի անտարակոյս խաղաղական միջոցներով միայն կարելի է յաջողցնել . թէ այդ առաջին քայլն առնելէ յետոյ, կարելի պիտի ըլլայ միմիայն խաղաղական միջոցներով՝ ծրագրին մինչեւ ծայրը հասնել, ատի ապագային գաղտնիքն է : Բայց եթէ այդ առաջին քայլը յաջողցնեն խաղաղական միջոցներով, արդէն անաղին արդիւնք մը ձեռք ձգած պիտի ըլլան, գործին կէսը, կէսէն աւելին, կատարած պիտի ըլլան, որովհետեւ եթէ թուրք կառավարութիւնն ու եւրոպական պետութիւնները հաւանին Հրէից մեծազանգուած գաղթականն ի Պաղեստին, խնդիրը լուծուած

կ'ըլլայ իր սկզբունքին մէջ, ու այլ եւս աւստի անփոփոխական զարգացումը : այս կամ այն միջոցով, իր անխուսափելի բնաշրջութեանը կը հետեւի մինչեւ վերջնական իրականացումը : «անկարելի» չէ ատ, արուած ըլլալով «Հրէից» եզակիան համերաշխութեան ոգին՝ կազմակերպեալ ու ճարպիկ գործունէութեան անօրինակ վարողութիւնը եւ լեծ ազդեցութիւնը զոր ունիցի կ'ընդունակեալ բարձր միջոցն շրջանակներուն մէջ :

Ուրիշ առթիւ թող չմտնեն ինքն սիրոնական շարժման մասին այս խորհրդածութիւններն ընդլայնելու : դարձը եւ զառնալով սիրոնական կազմակերպութեան օրինակին վրայ ձեռք առնելով հայկական կազմակերպութիւնը մը ստեղծելը հարցին, եւ բացարձակապէս համաձայն եմ սակեմ մէջ թէ պէտք է սիրոնականութեան կազմակերպական մեթոտին միայն հետեւիլ, եւ ոչ թէ անքիւ բաժնող ծրագրին : Անխմատ պիտի ըլլաք Հայոց համար՝ ընդգրկել սիրոնականութեան ծրագիրը որուն զլիսաւոր կէտն է Հրէանկըր Պաղեստինի մէջ վերահաստատել, մինչդեռ Հայերը իրենց հինաւուրց հայրենիքին մէջ մնացած են ոչ կը մնան ամենամեծ մասամբ, պահպանած քլլալով մինչեւ ցարդ իրենց երկրագործ ժողովրդի բարեբախտ ու կենցաղը : ինչ որ հարկաւոր է Հայոց քար ու մի է սաճիկ բարբարոս «րեժիմ» մին» որպէս զի չստիպուին այսուհետեւ փախչել իրենց գարաւոր ծննդավայրէն մեր մինչեւ ցարդ յամառեցան կառչած մնալ : Կացուցութիւնը նոյնը չէ ուրեմն, հետեւաբար գործունէութեան քրագիրը նոյնը չի կրնար ըլլալ : Երկրորդ՝ Սիրոնականութիւնը «քաղաքական» ձգտումներով ընկերութիւն մըն է ՚՛՛՛՛ Հայերը ունին քրգէն այդպիսի ձգտումներով ստորուած ընկերութիւններ : ցանկալի է որ նոյնք միանան, զարգանան, կատարելագործուին ու զօրանան, բայց բնաւ հարկ չկայ որ նոյն գործը կատարող նոր ընկերութիւն մը հիմնուի : Նոր ընկերութիւնը պէտք է ունենայ «նոր» ծրագիր մը, պէտք է ձգտի գոհացում տալ պէտքի մը որուն գոհացում տուող մարմին մը կը պահուի : Այդ պէտքը գոյութիւն ունի : Ատոր հետք է որ նոր ընկերութիւն մը հիմնելու առաջարկութիւնը ժամանակայարմար է եւ գործնական :

«Պէտքը» անվիճելի է : Սիրոնականութեա

հիմնուելէն շատ առաջ, հայ ժողովրդին լուսաւոր տարրերը զգացած են տգիտութեան, օտարամոլութեան, բարոյական թուլացման, ազգային ինքնազիջանկեցութեան տկարացման զէմ պայքարելու հարկը, եւ ստեղծած են բնականութիւններ հայ ժողովրդին խորը խաւերուն մէջ կրթութիւն տարածելու, դարաւոր ստրկութիւնէ ազատանուած հոգիներուն խորը ազգային զգացումը վերարժարելու ու ժարկկային նախապատուութեան գիծակցութիւնն արթնցնելու համար, հիմնած են զպրոցներ, թատրոն, գեղարուեստական, բարեգործական ընկերութիւններ : Ատոնցմէ զատ, Հայերը ունեցած են վեհապետիկ եւ վեհապետիկ երկու մշտաւոր մեծ վառարանները, որ այդ նոյն գործը հոյակապ փայլով մը կատարած են : Այսօր ատոնք մեծ Կոմսոսք քայքայուած են՝ եղեռնական զէպքերու հետեւանքով : Վեհապետիկ եւ վեհապետիկ ստուերը, որ միշտ կանգուն կը մնան, չեն կարող բաւել գոհացնելու ազգին բոլոր պէտքերը, որոնք այժմ մասնաւոր բազմապատիկ են դարձած : Տաճկական խոնութեան վերջին ահաբեկ պայթումին ատեն Հայերը զարհուրելի թշուառութեան մը մէջ ինկան : հազարաւոր փախտականներ աշխարհիս բոլոր կողմերը ցրուեցան՝ ողորմելի կացութեան մը մէջ, օրուան հացին կարօտ : Երբին մէջ, որքերն ու այրիները հազարներով հաճուեցան, այդ ազգիսի իրերու գրութիւնը դարձանելու համար՝ օտարները աւելի բան ըրին քան Հայերը : ատի պէտք է խոստովանել որքա՞ն ալ մտաթալից ըլլայ մեզ համար : Հայոց մէջ քանի մը անհատներ, եւ քանի մը փոքր խումբեր էին միայն որ ջանք մը ցոյց տուին, գոհողութիւն մ'ըրին : Եւ ատոնք ալ մեծ մասամբ հատուածական վաղանցուկ ճիգեր էին, շատ անբաւական՝ անսահման չարիքին հանդէպ զոր պէտք էր դարձանել : Տարակոյս չկայ որ եթէ գոյութիւն ունեցած ըլլար եւրոպական մեծ քաղաքի մը մէջ հաստատուած ընկերութիւն մը, բոլոր Հայերուն համակրութիւնն ու վստահութիւնը վայելող ու լաւ կազմակերպուած, այդպիսի ընկերութիւն մը շատ աւելի ընդարձակ, կանոնաւոր ու սեւակական արդիւնքներ տուող գործունէութիւն մը կարող էր ունենալ, որովհետեւ անուբանալի է որ հատուածական, անհասկանալի բարեգործութիւններէն շատը, յաճախ կազմակերպութեան, քննութեան, քոնթրոլի պակասին պատճառով, մասնական արդիւնք-

կեանքը ճանչցնէ՝ քաղաքակիրթ աշխարհին բու-
լոր խաւերուն մատչելի էրատարակութիւննե-
րով : Այդ չափ կարեւոր ճրագրին իրականաց-
ցումները ո՛րքան սակաւաթիւ են եղած զարդ
մեր մէջ, — անհատական շարաշար ճիգերու
արդիւնք եղող մանր մունր փորձեր միայն :

Այդպիսի ընկերութիւն մը պիտի կարենար
վերջապէս բլլեալ ձեռնարկներով վերար-
ծարձել ազգային զգացումը Բոլոնիոյ, Հուն-
գարիոյ, Ռումանիոյ, Իտալիոյ մեր օպարացած
ցեղակիցներուն մէջ, կայելով դանոնք Հայու-
թեան բնորոշուող ճգնաժամներուն, շահու-
նէ իրաւունքները, — գործ մը անհունապէս կարգի
ու բնութիւն, որ մինչեւ հիմա ընդհանուր
վարանցուկ քանի մը ջանքերով միայն փոր-
ձուած է :

Ընկերութիւն մը, որ իրեն նպատակ
պիտի ունենար այս բոլոր պէտքերուն
լիակատար զննարկում քայլ եւ որ ընդարձակ,
մեթոտաւոր, գիտակից ու տեւական գործու-
նէութեան յիմարի վերաբեր միջնու ցարդ
հատուածական անատանհան եւ ընդհանուր
պղծ կատարուած ճիգերը, անհուն բարիք մը
պիտի բլլար մեր գործընդհանուր համար : Անոնք
որ այս գաղափարը ճրագրի ձեւէն իրականացու-
թեան ձեւին պիտի փոխադրեն, պիտի ձանձախ
ծառայութիւն մը պիտի մատուցանեն մեր
այգին :

Մրադրին կարեւորութիւնը անվիճելի է ու-
րեմն : Անոր իրազօրքման ձեւին մասին կարելի
է վիճել : Կարելի է վեճել զնեւ սախնդիքը . —
լաւագոյն չ՞պարզապէս ընկերութիւն մը
հիմնել որ իր դրամագլուխը դոյաջնէ նուի-
րքատութիւններով ու անդամավճարներով
եւ ոչ թէ « պանքա » մը : « Պանքա » ն ունի
ատուելութիւն մը չայն է որ դրամ ատուելու-
րուն տուած գումարը չի կորսուիր, եւ անոր
չաճուն մէկ վասն է միայն որ կը գործածուի
հանրային գործին (այդ ձեւով միայն պանքա մը
գոյութիւն կրնայ ունենալ) : Եւ պիտի աւելի
կրնայ մղել ամենէն դժուարագոյնը քսակները
— այսինքն խոշոր քսակները, — այս-
պիսի գործի մը մասնակցելու : « Պանքա » ի
մը հիմնարկութիւնը կը պահանջէ շատ մը ձե-
ւակերպութեան ծախքեր որոնք քաւական խո-
շոր դրամարի մը կրնան բարձրանալ եւ զուր
կորած դրամ են : « պանքա » մը պիտի ունե-
նայ իր ամսականուոր վաճիչները, որոնց
համար ծախսուած դրամն ալ զուր վատնուած

դրամ կարելի է համարել : « պանքա » ն, հաս-
տատուելէն անմիջապէս յետոյ՝ չի կրնար
հանրային գործին համար դրամ յատկացնել,
քանի մը պարուպն գործունէութիւն յետոյ
միայն կրնայ բուն պարծին համար դրամ յատ-
կացնել, — եւ Հայոց պէտքերը, մանաւանդ
այժմ, անմիջական զգացումի կարօտ են : (Սխո-
նականները որոշած էին իրենց պանքային ջանք
գործածելու պիտի՝ երբ 200,000 ոսկիի հասնէր
իրենց դրամագլուխը . երկու տարիէն հասան
այդ գումարին, բայց Հրեաները միայն կրնան
այդպիսի հրաշք մը գործել) : Վերջապէս, կայ
արարկութիւն մը « պանքա » ի մեթոտին դէմ,
որ բանաձեւեց նոյն ինքն պ. Մաքս Երտաուել
կիր տարի մը առաջ, այդ նոյն գաղափարին
մասին խղճմը մը հայրենակիցներու կողմէ
կ'երթայի իրեն խորհուրդ հարցնել :

« Ամէն ազգ, բնաւ, պէտք է գործէ իր
ողորջն, անտնութիւններուն, բարքերուն հա-
մեմապ . Հրէից համար պանքա, հիմնելը ամե-
նարեակաւ, ամինաստօրական քան մըն է՝
ո եւ է ձեռնարկի մէջ, այդ պատճառաւ,
Սխոնականները անկանօրէն այդ միջոցին դի-
մեցին՝ այս անգամ գոյն գործածելով անչա-
հախնդիր նպատակի մը . Հայոց նկարագիրը
կը զուլանայ վանքերու, դպրոցներու, դրական
կրթականութեան, կրթական ընկերութիւններու
մէջ . հայ ցեղին հանրային գործունէութեան
յատկանշական պատկերացումները Վենետիկի
կաճառը, Էջմիածնայ վանքը, Սամուէլ Մու-
րատ դպրոցը, Մխացեալ Ընկերութիւններն
են . այդ ձամբով շարունակեցէք ձեր դրձու-
նէութիւնը, հիմնեցէք ընկերութիւն մը որ
կողմէ « աշխարհական Վենետիկի կաճառ մը »,
պղպային մատենարարան մը, մուսէնն մը, եւ
նոյնատէ ցեղին մտաւոր մակարդակը բարձրա-
ցնելու, ազգանդներ դարգացնելու, նկարա-
չիտներ յորինելու, անձնաւորութիւններ ձու-
լելու պ »

« Ընկերութիւն » մը, որ նպատակի մը հա-
մար դրամ կը հաւաքէ եւ կը գործէ, վերո-
յիշեալ բոլոր անպատեհութիւններէն զերծ է .
չատ նուազ ծախք ունի՝ կողմակի բարութեան
եւ պաշտօնավարութեան համար, եւ կրնայ
անմիջապէս գործի սկսիլ : Սրղէն « պանքա » ին
միակ տատուելութիւնը զար վերը յիշեցի,
կ'անհետանայ, երբ Լատմենք թէ այդ պան-
քան (եթէ պիտի հետեւինք Սխոնականներու
օգնականին) չի կրնար կրբեք speculation

ընել, այլ իր ունեցած դրամագլխէն՝ կարելի եղած չափով՝ ապահով ու հասութեամբ ձեռով տոկոս հանելու միայն կրնայ աշխատիլ. ուրեմն այդ պայմաններու մէջ նուիրուած դրամը անշարժացած դրամ է, քանի որ բաժնեատէրերը ամենաչնչին շահաբաժին մը պիտի ունենան եւ իրենց տուած դրամը զրեթէ միայն հանրային գործի մը ծառայելու նպատակին պիտի նըւիրուի: Արդ, այդ պարագային մէջ, լաւագոյն չէ՞ որ դրամ տուողները նուիրեն դրամագլուխը, որ կը զրուի ո եւ է եւրոպական մեծ պանքայի մէջ, եւ անոր տոկոսը կը յատկացուի հանրային գործին, — որով թէ՛ նուիրուած դրամներուն անկորուստ պահպանուելը ապահովուած կ'ըլլայ դարձեալ, եւ թէ՛ ուրոյն պանքայի մը հաստատման ու պաշտօնավարման համար ըլլալիք ծախքերը կը խնայուին: Եւ այդպիսի ընկերութեան մը վստահելի եւ ամուր հանգամանք մը տալու, անոր յանձնուած դրամագլխին լաւ պահպանուելուն եւ անոր տոկոսին լաւ գործածուելուն համար, կարելի է հաստատել գործառնութեան այնպիսի եղանակ մը, լուրջ քոնթրոլի այնպիսի մեթոտ մը, որ ո եւ է կասկածի տեղի չմնայ:

Արդէն, պէտք է դիտել որ Սիոնականներն իսկ պանքա մը հիմնելով չեն սկսած. նախ հիմնած են ընկերութիւն մը նուիրատուութիւններով, եւ այդ ընկերութիւնը, իր նպատակին իրականացումը զիւրացնող շատ մը ձեռնարկներու մէջ, հիմնած է նաեւ պանքա մը՝ իբր մին իր գործիքներէն:

Կարելի է ուրեմն հետեւել Սիոնականներուն ընթացքին՝ այնպէս ինչպէս անոնք սկսած են. հիմնել նախ ընկերութիւն մը, ինչ որ աւելի զիւրին է եւ աւելի պարզ, ու աւելի շուտով իրագործելի. յետոյ, եթէ պանքայի անհրաժեշտ պէտք տեսնուի, արդէն կազմակերպուած ընկերութիւն մը աւելի զիւրաւ պիտի կրնայ զայն հիմնել: Ու եթէ ընկերութիւն մըն է որ պիտի հիմնուի նախ, կարելի է՝ կազմակերպական մեթոտի տեսակէտով՝ օրինակ առնել նաեւ, բաց ի Սիոնականութենէն, հրէական ուրիշ մեծ ընկերութիւն մը, «Ալիանս Իսրայելիթ»ը որ քառասուն տարիէ ի վեր գոյութիւն ունի եւ կը գործէ:

«Ալիանս Իսրայելիթ»ը, հիմնուած 1840ին, եւ որուն կեդրոնատեղին եղած է միշտ Փարիզ, իրեն նպատակ ունի (ինչպէս իր կանոնագրութեան մէջ գրուած է), 1. Աշխատիլ ամէն տեղ

Հրէաներու ազատագրման եւ բարոյական յառաջադիմութեանց. 2. Արդիւնաւոր պաշտպանութիւն մը շնորհել անոնց որ Հրէայ ըլլալուն համար կը տառապին. 3. Քաջալերել ամէն հրատարակութիւն որ կարող է այս արդիւնքը յառաջ բերել:

Շատ երկայն պիտի ըլլար այդ ընկերութեան բովանդակ գործունէութիւնը պատմել այստեղ (ուրիշ առթիւ կարելի է վերադառնալ այդ խնդրոյն). պիտի բաւականանամ քանի մը յատկանշական իրողութիւններ յիշելով (զորոնք քաղած եմ «Ալիանս»ին քսանեւէինգամեակին առթիւ 1885ին հրատարակուած գրքոյկէ մը) իրողութիւններ որոնք զաղափար մը կուտան այդ ընկերութեան ձգտումներուն, գործելու եղանակին ու միջոցներուն վրայ:

«Այս ընկերութեան յայտագրէն բացալիք ալիս վտարուած են, —ինչպէս կը գրէ այդ գրքին հեղինակը, — քաղաքական խնդիրները: «Ալիանս»ը բոլորովին օտար է եւ պէտք է օտար մնայ քաղաքական, տնտեսական հարցերուն ինչպէս եւ ազգայնութեանց պայքարներուն, չ'ուզեր անոնց խառնուիլ, աւելի բարձր ոլորտի մը մէջ է հաստատուած, ուր կրնան իրարու հանդիպիլ բոլոր քաղաքական կուսակցիւթիւններն ու շահերը, բարեգործութեան եւ մարդասիրութեան հողին վրայ: Կրօնական ալ չէ իր նպատակը. աշխարհական ընկերութիւն մըն է, ո'չ մէկ կրօնական փրփականտ չունի ընելու: Հրէութենէն դուրս, ոչ ալ ո եւ է կրօնական վարդապետութիւն ունի պաշտպանելու Հրէութեան մէջ. աստուածաբանութիւնը իրեն այնքան օտար է որքան քաղաքականութիւնը: «Ալիանս»ին նպատակն է կրթութիւն տարածելով Հրէաներու մէջ (մանաւանդ յետադէմ երկիրներու այլասերած Հրէաներուն մէջ) քանոնք փրկել իրենց բարոյական անկումէն, պաշտպանել Հրէութեան պատիւը՝ հրք անոր վրայ յարձակողներ ըլլան, նիւթական օգնութիւն հասցնել հրէայ հասարակութեան այն հատուածներուն որոնք մեծ հալածանքի մը ենթարկուած են:»

«Ալիանս»ը հիմնած է հրէական վարժապետանոց մը Փարիզի մէջ, ուր կը պատրաստուին ուսուցիչներ որոնք կը ղրկուին այլ եւ այլ երկիրներու հրէայ նախնական վարժարաններուն մէջ դասախօսելու. այդ վարժապետանոցը Ֆրանսական կառավարութեան կողմէ իբրեւ «հանրօգուտ հաստատութիւն» ըն-

զուեւում է, եւ անոր անունովն է որ «Աւրիան»ը կգահեի կ'ընդունի: «Աւրիան»ը հիմնած է բազմաթիւ երկիրներու մէջ (Տաճկաստան, Եգիպտոս, Պուլզարիա, Ամերիկա, Ռուսաստան, Պարսկաստան, Թարապուզ, Թունուզ, եւն) բազմաթիւ երկսեռ զպրօցներ եւ արհեստանոցներ, ու քանի մը երկիրագործական վարժարաններ:

«Աւրիան»ը բարեգործական ընկերութիւն մը չէ սակայն: «Աւրիան»ը, կը գրէ գրքոյկը, մարդասիրական ընկերութիւն մըն է, բայց բարեգործական ընկերութիւն մը չէ. արտասովոր պարագաներու մէջ, երբ մեծ աղէտք մը ամբողջ գաւառի մը վրայ կը յարձակի, կրնայ, եւ պարտի, վնասուած հասարակութեան օգնութեան հասնիլ: Այսպէս, հանդանակութիւն բացած է այլեւայլ երկիրներու (Թունուզ, Մարոք, Պարսկաստան, Տաճկաստան, Ռուսաստան) Հրէաներուն համար ի այց, զայդ ընկելով, հանրօգուտ գործ մըն է որ կատարած է. տեղական կամ անհատական շահեկանութիւն մը միայն ներկայացնող խնդիրները դուրս կը մնան իր յայտագրէն: «

Ամէն անգամ որ «խամուրսուզ»ի ծանօթ պատմութիւնը վերանորոգուելով՝ Հրէաներու կէմ հալածանք յարուցուած է, «Աւրիան»ը բողոքած, այդ մեղադրանքին ստութիւնը ապացուցած, յաճախ դատ բացած, դատը շահած է անմեղօրէն ձերբակալուած Հրէաները արձակել տուած է:

«Աւրիան»ը եւրոպական պետութեանց դիմած է յաճախ, պաշտպանելու համար Հրէաներու մարդկային տարրական իրաւունքները, որ կոխտուած էին ինչ ինչ երկիրներու մէջ. Պերլինի Վեհաժողովին զրկած է երեք պատգամաւորներ, որոնք յաջողած են զաշնագրին մէջ որոշակէս արձանագրել տալ թէ Ռումանիոյ, Սերպիոյ, Պուլկարիոյ եւ ամբողջ Տաճկաստանի մէջ կրօնական տարբերութեան պատճառով Հրէաները պէտք չէ որ զրկուին օրէնքի առջեւ հաւասարութենէն. Սերպիոյ եւ Պուլկարիոյ մէջ Իշանագրին այդ տրամադրութիւնները գործադրուած են. Պերլինի Վեհաժողովէն ի վեր Ռումանիա է միայն որ զանոնք ոտնակոխ ըրած է, — Բայց Հրէաները վերջերս այսպիսի խոշոր ազդեցութիւն մը կրցան բանեցնել, որ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը նօթով մը Ռումանիան կառավարութեան յիշեցուց իր պարտականութիւնը, եւ անգլիական կա-

ռավարութիւնը այդ նօթին հաւանութիւն տուաւ: Երբ Ֆրանսա գրաւեց Ալճերիան, «Աւրիան»ն է որ յաջողած է Ալճերիացի Հրէաները ֆրանսական քաղաքացի ընդունիլ տալ: «Աւրիան»ը օգնած է Ամերիկայի մէջ հրէական երկրագործական գաղութներու հաստատման:

Վերջապէս, «Աւրիան»ը նպաստած է բազմաթիւ հրատարակութիւններու, ոմանց վաճառումը առաջուց ապահովելով (այսինքն իր անդամներուն մէջ ցրուելով գիրքը), ոմանց ալ տպագրութիւնը ինքն իսկ վճարելով. այդ հրատարակութիւնները (1885ին հրատարակուած գրքոյկը կը թուէ արդէն հարիւրի չափ գիրք) մեծ մասամբ Հրէից պատմութեան, լեզուին, կրօնքին վրայ ուսումնասիրութիւններ են կամ հրէական դատը Եւրոպայի առջեւ պաշտպանող գործեր:

«Աւրիան»ը սարքած է նաեւ գիտական առաքելութիւններ, զոր օրինակ՝ Ափրիկէի «Մալաչա» կոչուած սեւամորթ Հրէաներու վրայ ուսումնասիրութիւն մը կատարելու համար:

«Աւրիան»ին 1900ի տարեկան հաշուեգիրքը ցոյց կուտայ թէ 1900 մէջ այդ ընկերութիւնը ունեցած է իբր հասոյթ, 1,001,832 Ֆր. 47ս. որոնց մէջ 155,587Ֆ. 11՝ անդամավճարներէն, 5,466 Ֆր. 45՝ նուիրատուութիւններէն, 483,837 Ֆր. 81, այլեւայլ եկամուտներէ (Հիրշի, Ռոչիլտի նուիրած խոշոր գումարներու տարեկան եկամուտը), 12,202 Ֆր. նախատեսութեան գանձանակներէ, 42,949 Ֆր. 25՝ զպրօցներու գործին համար հաստատուած այլեւայլ եկամուտներէ, 287,000, Հրէական գաղթականային ընկերութենէն (Jewish Colonisation Association) 10,000Ֆր.՝ Թունուզի կառավարութիւնէն, 4,789 Ֆր. 85 մշտնջենական անդամավճարներէ:

Սիոնականները շատ հակառակ են՝ «Աւրիան»ին, որովհետեւ այդ ընկերութիւնը ոչինչ ըրած է Հրէաներու ազգայնական վերածնութեանը նպաստելու համար. ընդհակառակն Աւրիանը աշխատած է միշտ ու եւ ազգայնական ձգտում մարել Հրէաներուն մէջ, յարողած է որ Հրէաները Տաճկաստանի մէջ Տաճիկ, Անգլիոյ մէջ Անգլիացի, Ֆրանսայի մէջ Ֆրանսացի ըլլան՝ իրենց կրօնքը միայն պահպանելով: «Աւրիան»ը ջանագիր եղած է Հրէայ «անհատ»ին բարոյական, մտաւորական ու նիւթական բարձրացմանը, բայց ոչ Հրէայ ազգութեան վերակենդանացմանը: «Աւրիան»ը հակառակած

է միշտ Հրէայնորդ Պաղատին վերադարձին, զոր նկատած է անկարելի եւ վնասակար զազափար մը: Մեր բոլոր համակրութիւնը բնականաբար Սիոնականներուն հետ է. եւ եթէ «Ալիանս»ը իբր օրինակ կ'ուզենք ցոյց առ Հայոց, իր այդ հակազգայնական ձգտումին համար չէ անշուշտ. այդպիսի ձգտումով հայ ընկերութիւն մը բողոքէ մը չի կրնար ապրիլ մեր մէջ. «Ալիանս»ը իբր օրինակ կը ցուցնենք կազմակերպութեան տեսակէտով միայն, — եւ անսարակութիւն է որ, այդ տեսակէտով, մենք կրնանք անկից օգտուել:

«Ալիանս»ին կեդրոնավայրը Փարիզ է, եւ ունի մասնաճիւղեր՝ աշխարհի բոլոր մասերուն մէջ՝ որոնք սերտօրէն կապուած են կեդրոնական տնօրէն ժողովին, անոր կը զրկեն իրենց հաւաքած գրամները, եւ անոր հրահանգներովը կը գործեն միշտ:

Պէտք է սխառել որ եթէ հայկական ընկերութիւն մը հիմնուի Պանքա մը հաստատելու համար, ամենայնպէս քաղաքը (ըստ Սիոնականներուն) Լիւնոն է. կամ Նիւ-Եօքք: Իսկ «Ալիանս»ի պէս ընկերութիւն մը կրնայ իր կեդրոնատեղին ունենալ Վիեննա՝ Լիւնոն կամ Փարիզ:

Կազմակերպութեան ու գործունէութեան որ ձեւն ալ որ նմանընտրուի, — եւ ատոր մասին վճռական որոշման մը յանգելու համար «Ռուսաստան» եւ իր համախոհները կրնան ձեռնհաս անձերէ մասնախումբ մը կազմել որ մանրամասնօրէն ուսումնասիրէ հարցը, — այդ պահանջաբար լուրջ ու տեսական ձեւով մը իրականացման համար անհրաժեշտ, էական պայմանը ըստ իս՝ այն է որ զազափարն առաջարկողները կազմեն նախ «կորիզ» մը նիւթական ու բարոյական ուժի, որ հիմը կարենայ ձեռացնել ցանկացուած շէնքի: Եթէ զազափարը հրապարակ նետելով, հանրային հանգանակութեամբ, մասնաւանդ աղքատ քաղկներու հաւաքախան աջակցութեամբ զայն պիտի ուզեն իրագործել, այդ կերպով յաջողութիւնը անհրաժեշտ անկողնու կը թուի ինծի. ուրիշ բան յառնջ չի կրնար դալ բայց եթէ փոքրիկ համեստ ընկերութիւն մը, այդ խոշոր ծրագրին մէկ հարիւրերորդն անգամ իրագործելու անկարող, ինչ որ դրականապէս արդէն ապացուցուած է յաճախ. Ս.մերիկայի Հայկական Միութիւնը, որ նմանօրինակ ծրագրով մը երեւան

էլաւ վերջերս եւ ժողովրդական հանգանակութեան հիմնը, ծիծաղելի գումար մը միայն հաւաքած է մինչեւ ցարգ. Փարիզ կայ տար տարիէ ի վեր Ուսումնասիրաց ընկերութիւն մը, որ փոքր անդամակազմերով կ'ապրի. եւ ուրիշ բան չէ կըցած ընել մինչեւ ցարգ բայց եթէ տարին երկու ուսանող պահել Մըլէօնի վարժարանանոցին մէջ. քանի մը տարի առաջ կեդրոնական Հայկական Միութիւն մը հաստատուեցաւ Փարիզ, որպէսզէլ Ջոնսոնի նախաձեռնութեամբ, զարձեայ նմանօրինակ ծրագրով մը, բայց քանի մը հազար ֆրանք միայն կըցաւ հաւաքելու ու մէկ երկու տարիէն լուծուեցաւ: Եւ վերջին ընկերութիւնը, զոր «Հայկական Միութիւն» անուանով քանի մը Փարիզ հապաւառուած Հայերու զեցին հիմնել թաղարձակապէս նոյն ծրագրով, զարձեայ յիմնեցաւ ոչ թէ քանի մը Գայանաներու յարուցած սքանաւիճի պատճառով, այլ որովհետեւ անոր նախաձեռնակները ուրիշ բան չէին բեղեր իրենց հիմնալ բազմաբնակ, յոյսեր, — որոնք համամասնալ չէին, — եւ՝ առաջին վայրկեանէն իսկ նիւթական ամուր ուժի մը վրայ հաստատուած չըլլալով՝ չէին կրնար բեղմնաւորել: «Ալիանս» իզրայէլիս»ը հիմնուած է այդպիսի «կորիզ»ի մը վրայ, զոր հետզհետէ զօրացուցած են խոշոր նուիրաւորութիւններ ու կապակներ: Սիոնականներն իսկ, որոնք իրենց եթէ միլիոնը գոյացուցած են՝ ամենամեծ մասամբ աղքատ անդամներու առած փոքր գումարներով, կորիզ մը կազմելէ յետոյ իրենց կոչն արձակած են հրէայ զանգուածին. նախաձեռնակները առաջուց իրենք իրենց մէջ հաւաքած են զբւրմար մը, որ հիմը եղած է գործին. այդ գոյթ մարին հաւայի կախած ձեռքերը իրենց նաեւ իրենց տիեզերապէս յարուած, հեղինակաւոր, հմուտ ձեռնհաս անձնաւորութեանց բարոյական ուժը. անոնք միշտ գերակշիւղ գերը կը կատարեն Սիոնականութեան մէջ, անոր ուղեղն են, — ինքզինքնին ենթարկելով հանդերձ ամենախիտ ջոնթրոլի մը:

Եթէ ուրեմն այս զազափարին նախաձեռնութիւնն ունեցող մեր ուսաստան հայերնակիցները յաջողին այդ «կորիզ»ը կազմել, զազափարը կարող է մարմին առնել ու տեսական կեանք ունենալ: Ինչ որ Հրէաներէն պէտք է ամենեւեւ աւելի օրինակ առնել, իրենց Սիոնականութեան «ձգտումը» չէ, ոչ ալ իրենց

ընկերութիւններէն արտաքին ձեւեր միայն :
 Հրէաները աշխարհի մէջ իրենց դրամական գործ-
 րութեամբ եւ մասնորական մեծ անճանաչողութեանց
 քանակով ու որակով շատ բարձր են
 Հայերէն . բայց Հայերը անհունապէս բարձր են
 Հրէաներէն «ազգայնական» տեսակետով Հրէա-
 ները կորսնցուցած են իրենց ազգայնու-
 թիւնն ու իրենց լեզուն, իրենց հայրենիքէն բո-
 չորովին անջատուած են, եւ ազգային գրական-
 ութիւնն իր շունչին եւ նոր կը սկսին այդ
 բոլորը վերաստեղծել ջանալու, մինչդեռ Հայ-
 յերը գատնաբ անխախտ պահպանած են դա-
 րերէ ի վեր եւ այդ հրէական ընկերութիւն-
 ներուն պէս ընկերութիւններ, թէպէտ
 առկա չի փոքր սահմաններով, Հրէաներէն
 նուազ հիմնած են : Ինչ որ ամենէն ա-
 լելի պէտք է օրինակ անել Հրէաներէն
 անոնց կանոնաւոր, արմուռ ու լուրջ հա-
 լաքական գործունէութեան կարողութիւնն է
 դադարփնջներու իրագործման մէջ անոնց գրած
 գործնական ու ճշգրտի մզին եւ մանաւանդ
 անոնց հրաշալի համերաշխութիւնը :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆՆԱՆ

ՅԱՅ ԷՋԵՐ

ԵՐԿ ՄԻՐՈՅ

- Սօջ եւ՛ր, քեզ լալով կէլամ,
- եւ ի քո քաղքէն կող գնամ :
- Ի՛նչ պնդես՞՞ զայիւր ուներդ,
- կրք երթամ՝ չի կարօտանալ :
- Յայս աստուածաշէն ծոցէդ
- Երեսէդ մահրում կրո՞ւ մնամ :
- Բացվեր ես ի վարդ նման,
- եւ՛ պլպուլ ի դէմ քեզ կուշամ :
- Մարդ չեղնաս թէ է՛լ եմք սիրում :
- Կամ զքո սէրն մոռանամ :
- Կամ զքո ննուշիկ պագրիկն
- Թէ սրտէս հանեմ ուրանամ :
- Թէ քոց թէ չարար տակէ՛
- Ասանց քեզ իմ հայն է հարամ :
- Ավրեր եք քսան քարից
- Ու ճարեր նմ հազար արարչ զայն :
- Ի՞նչ շահ է իմ շատ ապրելն
- Որ առանց սիրուդ կը մնամ :

Ե՛ս ու գուն, հողի կ'լին ու գուն,
 Ե՛ս ու գուն, աշխարհ աօկեցի ի քուն :
 Ե՛ս ու գուն մայիկ' քօք, ետն՝ գուն, զքո մի զն
 Ե՛ս մ'աք դեռն՝ օթվան սարերուն :
 Զէր անա՛, հողե՛ր, լէր անա՛,
 Պայքի ու տեմ՝ զունքէ՛ր ի վերայ :
 Ա. Նապար. ճեպար
 սաղարան թիւ 565

ՆԱՀԱՊԵՏ ԲՈՒՅԷ ԿԻՊՒՆԱՆԷ. — ԲՆԱ
 ԿՍԵ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ԵՐ ԱՐՇԱԿ ՉՕ-
 ՊԱՆՆԱՆ — ՏՊԱՐԱՆ «ԱՆԱՂԻՏ» Ի ՓԱՐԻՉ 1902

ԱՅնուասիկ համար մը որ եթէ ոչ լթիւն
 չունենար՝ պէտք էր ստեղծել : Պէտք էր՝ մտ-
 զին՝ երեւակայութեան ու մով չեցնել պակա-
 սար մը — սիրոյ բանաստեղծութեան մեծ պա-
 կաստիւրը — մեր նախնիքներէն կտակուած
 գրական ժողովան մէջ որ սնկայն ա՛յնքան բեճ
 դրան՝ եզած է ազօթքը՝ ու աղէտքն արտոյայ-
 տութեան մէջ, որ ա՛յնքան ընդունի ըրած է
 մեզի Տրոսմաթիւն տունը, ու մեզ ա՛յնքան
 պտընցուցած Յայն շնորհը :

Երեւակայութեան խօլ թռիչ մը չսխտի քննար
 երթաղբի գրաւոր — ու ազատ — քանաստեղ-
 ծութեան հեղինակներ այն ցեղին մէջ որ «վի-
 մանի մանաստեղծութեան»՝ ճարտարագիտու-
 թեան՝ այնքան հոյակապ յիշատակներ թողած
 է Անիի մէջ, զոր գե ղերջերս հիացումով ու
 դուրգուրանքով ընչս բերաւ Էինչ իր հրատա-
 րապետութեամբ : Հոն տնտեսուած նշխարներէն
 լոկ կարելի միտի ըլլար վերակերտել հայ
 ցեղին պեղեղկագիտական զգացողութեան բու-
 վանգակ ընդունակութիւնը՝ կարելի չէր ըն-
 դունիլ որ մեր գրականութիւնը ներկայանար
 մեզի խտակեցիկ արեղայի մը նմանութեամբ
 որ ձկոքերը երկինք մշատաբար կ'ազօթէ
 անվերջ ու կը հառաչէ յանցանքներու հմմար
 զոր գործած է, եւ յանցանքներու համար զբր
 բնաւ պիտի չդործէ՞ եւ եթէ մեր պետ-
 միջներէն ալ չունենայինք ժողովրդէն սիրուած
 ցուցքերու եւ հեթանոսական երգերու յիշա-
 տակութիւնը, եւ երբեմն նոյն իսկ կարճովը-
 տուր հատուածներ, ինչպէս «Սաթերիկի» ու
 Արգամի տոհմաբը՝ որոնց վրայէն մեր պատ-
 միջները = բարեմիտ կրօնաւորներ — կ'աճա-

պարեն թոխ անցնիլ, կարելի չէր հաւատալ թէ Արեւելքի դրայտութենէն մեծ բաժին մը ունեցող, զարգացած իմացականութիւնով ազգ մը ինչպէս էր մերը, թէպէտ անընդհատ իր գոյութեան յամառ ու դաժան պաշտպանութեանը հարկադրուած եւ Բիւզանդի պատմած Արշակ թագաւորի գինուորներուն նկարագրեղ բառերով «համակնիքակներու ծայրերով երեսին քրախնքը սրբելու» ստիպուած, ծնունդ տուած չըլլայ երգողի մը որ աւելի գողար, գուարթ, խանդակաթ զգացումներու արտայայտութիւն տուած ըլլար, Գոյութեան հրճուանքը մեզ չըջապատող Մեծ կեանքին, անխորհրդորէն — ու թերեւս շատ խորագիտօրէն — շոայլ՝ յոռթի կեանքին աղւորութիւնը, եւ մանաւանդ մեզ ցնցող կրքերուն ամենէն տարականը ու ամենէն տիրակալնը՝ Սէրը՝ ճանչնար ու տաղէր :

Եւ ահա Չօպանեան — ինքն ալ բանաստեղծ մը՝ ո՛չ փոքրերէն — երեւան կը բերէ մեզի այս ցանկալի տաղերգուին Բուշակի փոշեթագ զէմքը, մապինսողարաններու լքուած ձեռագիրներէն՝ ցանուցիր հրատարակութիւններու մէջէն գասելով զտեղով՝ վերձանելով, համեմատելով, դասաւորելով եւ սքանչելի յարաջաբանով մը ի վեր հանելով նշանակութիւնը մեծ բանաստեղծին որ կար Բուշակին մէջ : Չօպանեան ստուգիւ ունեցած է այս յայտնութեան մէջ «Սէրը որ կը փնջրէ, հանձարը որ երեւան կը հանէ եւ արողեսուր որ կ'արժեցնէ» : Օ՛հ թանկազին յայտնութիւնը որ լսել կուտայ մեզի այն սրտէ կլած ու սրտին գացող սիրարբեցիկ սրտագեղումները : Ի՛նչ զարմացնող պարզութիւն, թարմութիւն, անկեղծութիւն անողն մէջ : Եւ ի՛նչ բերկրութիւն տեսնել, երգ երգի կտուէ, նոյն Բուշակը, յաղթական՝ արեւելեան բառաշատութեան ու սեղթեւեթին կապանքներուն, որ կը թափէ իր աշխոյժ երեւակայութեան գիւտերը, իր ճշմարիտ բանաստեղծութեան «ճուհարները» անսպառ խանդով եւ կը հարստացնէ մեր գրականութեան տունը, գործածելով «հանցգոյն գեղեցիկ լեզու որ լնու տուն մի ճուհարով» :

Ոչ մեր չարակնոցին կրօնական երգերը — որոնց մէջ սակայն տեղ տեղ կը ցոլայ մեր հին Զրադաշտական կրօնքին բանաստեղծութիւնը — ոչ Գրիգոր Մագիստրոսի արարականի նման

ոտանաւորը, ոչ Ներսէս Ենորհալիի տաղաչափեալ առակները եւ Կաւելի մեծ քերթուածները՝ «Յիսուս Որդին» եւ «Ողբ Եղեսիոյն», ոչ Նարեկացիի նմանաձայնական հրախաղութիւններով դրամաւորները — միշտ հանդերձ ծնրագրութեամբ իր հոյակապ արձակ բանաստեղծութեան — ո՛չ ծաղիկներու եւ թռչուններու նմանութեամբ տաղերը, եւ ոչ տաղարաններու մէջ խառն ի խուռն հաւաքուած գովքերը ու ճօքերը, եւ ոչ ալ մեր ուրիշ ծանօթ աշուղներուն երգերը չեն այնքան դուրս արշաւեր պայմանադրական նիւթէ, նմանութիւններէ եւ յօրինումէ որ կարենան ինքնաւոր սրտի բանաստեղծութեան անուն ստանալ ու անոր յատուկ հմայքը գործել մեր վրայ : Բուշակ լեցուն է տողերով որ կուգան իսկոյն բնակիլ մարդու մօքին մէջ, մերձաւոր հնչում ընտանի կոչում կը դաճնան, եւ միշտ կ'երգեն մարդու սրտին մէջ :

- ... « Առանց քեզ եզ ո՞նց ապրիմ կամ իմ աչերս տանի քուն »
- ... « Իմ էին սէր ւանջի յորդոր, իմ արեւ եւ իմ աստուոր »
- « Երբ զի՞մ արեւէս հանեն թող հանեն սէրն աստնվորէս »
- ... « Երբ սէրն աստնվորէս հանեն, թող հանեն զաչվիս երեսէս »
- ... « Քո սէրդ է արիւն եզել հաւսար իմ երակս է մտել »
- ... « Շատաւիզ յերկինս տղւեթ, խաւարիբ լոյսն աստղերուն »
- ... « Իսկի կո կարնա՛ս գիտնալ թէ քանի ինձ ես պիտացել »
- ... « Կորել է իմ հոգուս հոյին ւ անհոգիկ ես եմ մնացել »
- ... « Երբ սապո ու համբեր չունիս, սիրոյ աէր ինչո՞ւ կը լինիս, »
- ... « Աւա՛ղ թէ մեռնիլ պիտէր եւ մտնուի ի հոգ ւ ի գնտան. »
- ... « Ճրագդ, ա՛մ, ալ ի՛նչ վառած՝ երբ բազկիս ուժն հատուցիր » :

Ինչքան ալ գրաւիչ ըլլայ այս սրտարոյր, պարզ տողերուն քաղցրութիւնը, ղեռ կարելի չէ գնահատել անոնց բովանդակ քաղցրութիւնը, ղեռ կարելի չէ գնահատել անոնց բովանդակ արժէքը առանց Բուշակի նախընթաց կամ ժամանակակից երգիչներուն, ապելի ոճով, աւելի խնամով զարգարուն գրուածները

... « Գիտնալ տա՛նք նոյն յայտնիս ինչպէս որ քո սիրտն արեւն ինչպէս որ քո սիրտն արեւն »

կարգալու : Անդրոյմէ դառնալ Քուչակին՝ կը նմանի «ծովական» գիշերին՝ ժխորոտ, լուսաշող, խղճուկ քաղաքէն դուրս գալ, պարզ, բաց երկնքին տակ՝ իր բոց աստղերով : Ասկէ հիտեցնելու չէ ստիպան թէ Քուչակ չունի փոխառիկ, նմանողական մասեր զորոնցմով սկիզբ կ'ընէ ամէն հեղինակ, հետեւակ, տկար տողերէ ոչ ամբողջ քառեակներ՝ իր ետրիջն աչքին, բռնքին, կարմիր երեսին նուիրուած՝ հսկարակ ճաշակի նմանութիւններով, կամ քղցրերու իմաստութեան մնայուն մթերքը կազմող առակաւոր ասացուածներ ոտանաւորի դարձուած, որոնց մէջ բացակայ է անձնական չեղար ու բանաստեղծական բոցը, բայց կարելի է հաստատել աներկիւղ թէ այս ամէնը հանելով հանդերձ, Քուչակ մեզի կուտայ իր ինքնութիւնը յայտնող մեծագին մնացորդ մը՝ անանց գեղեցկութիւնով ու երաժշտութիւնով :

Անփոփոխ մակարդակի մը վրայ չի կեցար Քուչակի գործը բայց երբ իր բարձրագոյն կատարին վրայ է Քուչակ, ու զարմանալի հանդիպումով մը — որ տիեզերական մտքին հիմնական միութիւնը ու նոյն ատեն Քուչակի մեծութիւնը կը յայտնէ — օտարազգի մեծ բանաստեղծներու հետ գրեթէ համանման ներշնչում կը ցուցնէ ինչ ինչ հատուածներու մէջ, ու բաղդատութիւն կը հրաւիրէ . Քուչակ այդ վերտանգաւոր հանդիպումէն չի կործանչը, չի նսեմանար՝ այլ կը մնայ անայլայլ իր յատուկ փայլովը : Անգամ մը կը յիշեցնէ Տանթէի Պէ-աթրիչէն որ գատուած իր սիրականէն, ծագիկ կը քաղէր երգելով, եւ «երգելուն հետ կը քաղէր, եւ քաղելուն հետ կ'երգէր» : Աւելի սքրտաշարժ չէ՞ Քուչակ իր սա քառեակով .

- « Զիմ ետրն ի գնալ տեսայ որ կ'երթար ի ճամփագ ի վար
- « Մանտր քայլափրիս կ'անէր, կու քաղէր ծաղիկ նունուֆար .
- « Ամէն հանգչելու անդիկ՝ երեսին գնէր ու կուլար .
- « Կուրնար չարկմունն աչու ին որ կու պահեն քեզ յիսնէ օտար : »

Պէտք իրէ կ'երգէ զմինչ Քուչակի կարգ կուլայ, կատկանչող առարբերութիւն մը Արեւելքի գու Արեւմուտքի :

Հետեւեալ Երկու քառեակներուն մէջ կարծես հինաւնէրց սիրոյ բանաստեղծը Անակրէոնն է որ մանուկ Երոսի խաղերը ո՞ն գործած աւերը կ'երգէ . բայց Քուչակ հելլեն

բանաստեղծին թեթեւ շնորհին վրայ ծաւին աննման գեղեցկութիւնը կ'աւելցնէ .

ԽԵ

- « Սէրն երբ ի յաշխմարս եկալ, եկաւ ի սիրոս թառեցալ,
- « Հնապ իմ սրաէս ի դուրս՝ յերկրէ յերկիր թափեցալ,
- « Եկաւ ի գլուխս ելաւ, եւ յըղեզս ելաւ թառեցալ,
- « Աչիցս արաստունք ուզեց նա արիւն ի վար վաթեցալ :

ՉԵ

- « Քո սիրուդ մտիկ արի նա զէտ նետ ի շարիէն ելալ,
- « Ես անմեղ կանգնուծ էի, եկաւ իմ սիրոս գամուեցալ
- « Մանկունք ձեր արեւնուդ ասեմ . այս նետիկս որ յիս գամուեցալ
- « Եւտով գեղ ու ճար արէք, որ չասեն թէ յանկի մեռալ :

Երեք անգամ ալ՝ հսկայ Եէքսփիրթի սիրոյ տրամին «Ռօմէօ եւ Ճիւլիէթ»ի մէջէն հատուածներ կը յիշեցնէ Քուչակ «Առաջին» երբ Ռօմէօ իր ձիւլէթին ու լուսնին միջեւ համեմատաբար կը գնէ ըսելով «նախանձոտ լուսնիւր որ աչքէն հիւանդ է ու գունատ իր ցաւէն թէ դու՛ անոր նաժիշտը՝ չպտ աւելի աղւոր ես քան ինքը» : լսեցէք Քուչակը .

- « Լուսի՛ն , պարձէնաս, ասին , «Լուս կուտամ աստնլորիս» .
- « Ահա հողեղէն լուսին ի գրկիս՝ և երեսն երեսիս .
- « Թէ չես աւտալ այս գերուս, յետ տանիմ ըզփէչ կապայիս .
- « Վախեմ սիրոյ տէր լինիս , լուս պակաս տաս աստնլորիս :

Դարձեալ՝ երբ ձիւլիէթ , արտաքուստի դատապարտուած, Ռօմէօի հետ իր վերջին գիշերը կ'երկարէ խանդաղատութեան անվերջ խօսակցութիւնով եւ յանկարճ կը նշմարէ առաւօտեան լոյսը որ կու գայ ընդմիջելու իրենց աղապատանքը, ու չ'ուզեր ընդունիլ թէ առտուան լոյսն է, այլ մեակէք թի մը լոյսը կ'ուզէ հաւատալ զայն, եւ երբ վերջապէս ակամայ կը համոզուի, կը գոչէ՝ «Ուրեմն, պատու հա՛ն , ներս մտցուր աճաւօտեան լոյսը ճիւլիէթող կեանքը ելլէ դուրս», եւ կ'անարգէ առաւօտեան մուսետիկ արտոյտը, զի կը բաժնէ զինքն իր սիրելիէն .

« Գիշեր, զու յերկան կեցիր, թէ կարես՝
 տարեկ մի եղիր,
 « Իմ կարն ինձի հիւր եկեր, գէտ ճազար
 տարու թէ գրախս,
 « Առաջ պիտի զգատ կեցիր, որ զմեր
 խաղէր կ'աւերես,
 « Դաս զլոյսն ի վրայ, բերես զգիտ իմ կարէն
 բաժանես: »

Սեպտեմբեր 18-ին 1890 Վր. գեղով թմրած
 ու անչնչացեալ կարծած ձիւկիւթի մարմնոյն
 վրայ հակելով խելակրոյս կ'որոշէ մեռնիլ
 թոյն խմելով եւ շնամ կը գոչէ: «Աչկունք»
 նայեցէք ձեր հուսկ նայուածքը: բազկո՛ւնք,
 ածէք զրկիլ՝ հոգակ անգամ. եւ շրթքի՛ք,
 ո՛վ դուք դռներ շնչառութեան, արգար համ-
 բոյրով մը սիրեցեցէք անթեւական դաշիկը մը
 վերահաւ մահուան հետ ԿԿ

Հատուկ յիշատակ

Աչկո՛ւնք, ծրարեմ. քզբեղ կրակով որ եր-
 թաս երես
 « Կեդու, աչ կարեմ գրեց գուր դանկով որ
 աչ չխօսիս:
 « Սրտիկս, ա՛յ Կրանակ ամեն, նորիսին մէջն
 թանգըրեմ »

Ահա մրցում մը որուն մէջէն պատուեալ կ'ելլէ
 Քուչակ: Իրա՛ւ, քմնի մը ծանրիկ, տոթ իսկ ազ-
 նուակզի ծաղիկ, չեն կրնար համեմատուիլ արե-
 քայական բուրաստանի մը հետ. բայց կարե-
 լիքը այն է որ երեւան կուզայ հողին բոլոր
 աղերութիւնը եւ նպատաւոր պայմաններու
 մէջ փտաւոր ծաղիկի թուով մը կարելիու-
 թիւնը:

Գ. ՓԱՌՆԱԿ

(Շարունակելի)

ՏԵՍԹԱՆԸ

(ԲԱՆՏՐ ՎԵՐՅՈՒՇՈՒՄԵՐ)

Աստու մը, երբոր արթնցանք ընդեր յարա-
 նընից նորեւրու հետ մեզի բանասկիւթ գտանք
 գինքը: Բնական մահուան իրաւունք
 Այգպէկ ամենայնիւր, երբ գետինը փոռած
 անկողնի մը վրայ երկար խօսակցութիւններէ

կաք, ամենքս երէկուան անմասններէ հայ,
 յոյն, ալպանացի եւ թուրք, միացուցած
 մեր համանուն ցաւերը, մեր հատուցները ին-
 յարու խառնած՝ կ'երթայինք, հակառակ ա-
 տոր: վաղուան վրայ զօրաւոր հաւատով մը
 խրաբանչիւրս իր խշտեակին վրայ մեր աչ-
 քըները գոցել, մեր քունին միջոցին՝ բանտը
 կը լինար նորեկով ու յաճախ կը շրթնք գի-
 շերուան լուծեանը մէջ գոր աս լ տեղ եր-
 կար: կամեմա՞նք հանիւններ կը հատկաքնն
 հեղայ բանալիին դարձք զրան զգայանքին մէջ
 ու քարայտակին վրայ արձագանքը վաճի՛
 կողմիւ անվարձ քայլերուն Գ

Եւ առտու մը, այդպէս մեզի բանասկիւթ
 գտանք այդ անգամ: Հազիւ պեղեցն շտերը
 մտուերտի սկսած էին. երեսները մահուակի
 մորթի փայկուեթիւն ունէին. խմբեալ,
 խօսնիրտուո՞ն մազերը անկազապնը ու նեղ
 փէսը մը տակէն ծակտին վրայ կ'ընային
 մինչեւ աչքերը՝ որոնք, բարի ու միամիտ,
 յերասու ժպտով մը կը շարժէին: Վերի չըր-
 թունքը, մէկ քովէն կարուած, պարիկ կտոր
 մը պակաս կ'օգնէր ամենուն գթոս համակ-
 քով թունը արթնցնելու: Կարձ միթան մը
 հալած էր որուն թիւրու չեկող ներկու եզերք-
 ները տակէն վարդագոյն տպածոյն հանիլի
 մշտեց կը հանէին: Կարծիր գօտիին փակ
 գոյնը նետամ կապոյտ շալվար մը սրձուք-
 ներուն վրայ նեղ ու ծալած պղտիկ ծայրով
 մը որ ետեւէն կ'երերար երբոր քայլը կ'առ-
 բողջայնէր իր տարազը:

Քնդանքապէս կը շարադրուէր Սաչիկ, գե-
 աթիւր նստած, կամ բնկողմանած վեկզուն ան-
 կողմին վրայ քր աղտոտ վերմակէ մէջը բազ-
 կանար: Առջի Վալայկեանէն ամենուն հետ
 բարեկամ էր եղեր ու անոյ շնորհով էր կը
 պատմէր իր պատահարը ամենայն որ իրա-
 քանչիւրով կը հետաքրքրուէինք: Իբրեքան-
 չիւր նորեկի շուրջ հաւաքուած անոր ծախն
 ճանաչողութեամբ վայրկեան մը մեր կաւը
 մտնալու թելադրութիւնով կամ այն տիրա-
 կան բնադրով որ ամեն ղեքաղծները իրարու
 քով կը տանի, կը հրէ, իրարու մէջ կը ծուլէ:

Սաչիկը Պարտիզակէն էր ք երկու տարիէ է
 վեր Պոլիս կէտ: Ունդարանի կողմը սիմթի-
 ճիւթիւն կ'ընէր: Տաճկեանը որով կը խօս-
 ւէր Պարտիզակի այսբլինին երգող շեշան
 վրայ թափած ցատրու թիւններուն մէջ
 ալ իր գեղջուկ լեզուին պարզուկ անբաւա-

կանու թիւեր կը թարգմանէր : Երկու բառին մէկը խոշոր աղի հայտնութիւն մը կը ներկայ տր ասկան իր բեթիին մէջ նախնական իմաստը կործանելով : Կարծես անմեղ բան մը կը դառնար :

Խաչիկին պատմութիւնն մեզի ոչ մէկուն պատմութեանը կը նմանէ յետիւս իսկզուաբաճանաւով զայն կը զուրցէր , գրեթէ հպարտութեամբ ու բարձրաձայն : ու մտիկ կ'ընէինք իրեն , թեթեւցած մէ գոհ մեր միօրեանակ դժգոհանքին մէջ անոր բերման զանազանութեանը համար :

Խաչուէճի Եակոբը , օրինակի համար , Եւրովացի մը , զետեւրիասարդ , որ փնտռուած , զրական լեզուով մը կը խօսէր , վրձնահոտութեան զոճ մըն էր գրեթէ . միտքին զէր անեցած նամակ մը գրել Եւրովա միացած իր հիւանդ մէկ հօրնդորորդուն որուն մէջ զայն մխիթարելու համար ճակատագրին ու Աստուծոյ վրայ կարգ մը փրկութեան խոսքերը : Գաճուցի թեմերէ ետք , կը յորդորէր անոր յուսալ , ինչա յուսալ մտաւոր ապաքինումի մը : Եւսակը , հոն դիւլը , թշնամի դրացիի մը մտանութեամբ ոտականութեան ձեռքը անցեր էր : Արդ , ամեն մարդ գիտէ թէ « հիւանդ »ը աղբայրն զորքը կ'ակնարկէ , եւ ահաւասիկ մեր Եակոբը ամբաստանուած Եւրովայի մէջ , իր արգարեա հիւանդ հօրեղբոր ըզնի հետ համարեւորուող յեղափոխական կողմալերպութեան մը անհերքելի ուժերով :

Խաչանճի հաճի Գրիգորը , ան ալ ներկայի զրացի , յիսուներ անցուկ , կարծահասակ , մէկ ուսը միւսին վեր շատախօս հայրիկ մը շատ առաջնորդ խօսիլը սիրելուն պատիժը կը քաշէր : Ինչու մը որուն վարձու տուած էր իր խաչութիւն մէկ մասը՝ ամիսներէ ի վեր վարձագրինը չի վճարեր եղեր , եւ օր մը հաճին պահանջիտ քարկու թեան վայրկեանի մը՝ զնչուէ իր զգացումներէն բռնելու համար՝ կ'ըտէ :

— « Պուրասընտա չան ինչու մաղ , էզան օքուսուր » . (այսինքն զանգակ չեն զարներ , էզան կը կարգան) . զոր զնչուն զիւրթայ սապէս կրկնել անկիւնի ոտականութեանը :

— « Պուրասընտա էզան օքուսուր , չան չալընըր » (այսինքն էզան չեն կարգար : զանգակ կը զարներ) : Ինչ . ր անչուշտ մահմետական կրօնքին զէմ անարգանք մըն է , եւ որուն

նախնական քննութեանը համար համին Երկու ամսէ ի վեր այս պատեթոնն մէջնուէ :

Կիտարացի Մինամըլ հարեաճ զո պրուէն երեսները այրած , շրջուի մանրամասն մըն է , որ իր վշտակովը Մայրը , անոր քոյրը քրոջը զաւակները կ'ապրեցնէ : Եղանակին հմտեմտ . իր ձեռքի պրոմէն սակառին մէջ կը ծածկուի սպառնալու տակերէն : Վրացականութեան ինտիկ , պիւլպայ եւն : Կիտուն կը զառնայ բերնին , մէջ ու հզուէն տանկերէն , մը սխիւթութիւն մը որ օր մը արմատու յերկայութեան կը հարցնէր :

Ինչ է պատճառը թու հոյ գոնուելուդ : Մինաս աներկիւղ անիջապէս պատաշխարհեց :

— Անուսիւր Մինաս ըլլալը միւսին է մոլոր զո Խոնարար Սարգիսը : Ինչկեանցի , երկու տանիկ էֆէնտինիու զով կ'աշխատէր Բիշէր մըն էֆէնտինները կ'ինելու կը բերէն տրն , Կարբանան , կը պարենու կ'երգեն միւսեւ զո տունը ոտականներէ կը կ'ախուի ու չներկաներուն ամենքը : Կանչուր խոհարար Անրեղ սողի բանտ կը բերուին : Միայն թէ կ'երգ օր Վերջը , էֆէնտինները երաշխաւորութեամբ ազատ կը ձգուին : Անկնեւ պահուցի շապող մէճիտիյէ մը կը զնեն Արգիսին ձեզքք քր չորս տանական անիւրիք զէնէք . խոստպնալով յաջորդ օրն ալ գիւրքը արձակել ալ : Անկէ ի վեր ամիս մը անցած է , ո՛չ հարցնող կայ Աերգիսը , ո՛չ փնտնող :

Թիւթիւնճի կ'անու եւ իր ընկեր Բաչեգինը Պէոյի քոնէթի խանութ մը քանի ին զոր զօցելով ու չիւ մը վարձեցին Պէշիթիալ : Կահաւորեցին , ապրանքը փոխադրեցին ու չէրքեց վարձագրին կանխիկ արձակմանը վճարեցին , բայց առաջին օրը զուր փեղկերը բացին ու ոտականքնի եկան քան զրաւեցին ու զիւրեք ալ բանկա առաջնորդեցին :

— Ձէթ՝ զիտեր ոք հացերուն ալ զիւրեքած է Ձէշիթիալ խանութ բանալ :

— Աստուած մեր թաղածիւրին երկար կեանք տնյ , էֆէնտին ք շէինք զիտեր : Եթէ գիտնալ ինք , Կարկաւ շէինք հրաման աններ : Կանի որ ալ զպէս է , չենք բանար , էֆէնտին Պէոյի ք փէրէ կ'երթանք մերէն , Սարգիսը , Խալախ , Թէնէր կ'երթանք՝ մեր գործովը կը դարդինք , թնայում որին համար արք հագուէն ամօթք կ'ընենք :

Ինչ ի զիւր : Թիւթիւնճի Յիւսն ու Գա

րեղինը միշտ բանտն են :
Ու դեռ ուրիշներ կան , անթիւ չանհամար :
Թուրք մը որ առնելիքի խնդրի մը մէջ չաթա-
գաճորին անուշով ընդմիջուով մը ի պատաս-
խան անխոհեմութիւնը կ'ուշենայ ըսելով .

— Հոս թագաւորը ես եմ :
Չորպէս անող Միլքիյէ վարժարանէն որոնք
ամիսէ մը շրջանաւարտ պիտի ելլէին եւս ո-
րոնք նախ օրերը , տաճիկ թերթերու նկա-
քագրութիւններէն դրգուած՝ Ալթը-Վէրմէրի
յուշական եկեղեցին կ'երթան իրենց աչքովը
տեսնելու Աստուածամօր հրաշագործ պատկերը
որ ձեռքը իր պաշտողներուն գլխուն կ'իջե-
ցընէր : Օտը տաք էր ու ֆէսերնին հանած կը
յառաջանային եկեղեցիին մէջ երբ լրտես մը
որ իրենց կը հետեւէր կամաց մը , ոտակա-
նապուն հրաւիրեց զիրենք ու ըսին թէ քրթ-
տոնէից մուրթերուն այդքան ջերմեանք յար-
զանք մը ընծալելու համար՝ անշուշտ կրօնա-
փոխ ըլլալի՞սք փոք ունէին , Բաւտիս մէջ չորս
օր մնալէ ետք՝ իրենցմէ երեքը որ գաւառնե-
րէն Վին՝ իրենց քաղաքները աքսորուեցան ,
մինչ չորրորդը , Պոլսեցի , ազնիւ ու լուրջ
տղայ մը , կը մնար ու դեռ պիտի մնար ո՞վ
Պիմէ ո՞րչափ , մինչեւ որ իր մկտին ալ պէտք
եղած « անօրինութիւնը » ըլլար :

Բայց ամենուն մէջ ամենէն տարօրինակը՝ որ
սակայն մենէ ոչ մէկը կը զարմացնէր՝ Սելա-
նիկցի ռարիչ թուրք երիտասարդի մը պատ-
մութիւնն էր որ ամիսներէ թվեր կ'աշխատէի
Մէծիթի պեճուքի տաճարէն մէջ պաշտօն մը ձեռք
ձգել : Ազգեցիկ յանձնարարութիւններու շը-
նորհիւ վերջապէս այն օրերի ի՞նչ սպասակին
պիտի հասնէր , բայց միջօրէի մը , սրճարանի մը
անկիւնը նստած , թուղթի կտորի մը վրայ իր
սրտին հառաչները կ'երգէր , իր գրտին հա-
ռաչները՝ Սելանիկ մնացած հրէայ աղջկան մը
ուղղեալ , անոր աչքերուն , հասակին ու ծիծե-
րուն համար կարօտակէզ տողերով՝ երբ ձեռք
մը մեղմիւ վերցուց թուղթը առջեւէն իւ ու-
սին յայտնելով՝ իրեն հետեւիլ հրամայեց : Ոս-
տիկանութեան դուռը հարցուցին , քննեցին ,
հարցափորձեցին ու իբրեւ հետեւութիւն ու-
սիկանապետը ըսաւ .

— Այս գրածդ քիչն էր չէ , բայց քանի որ
գրելու այսքան կարողութիւն ունիս՝ կրնաս
օրին մէկն ալ վնասակար գրութիւններ շա-
րադրել :

Հիմա բանաստեղծ երիպատարը համակեր-

պած կը սպասէր որպէս զի , ինչպէս վերջին
հարցաքննութեան միջոցին հասկցնել թուած
էին , իր ծննդավայրը զինք վերադարձնէին՝
սա՛լ անգամ մընալ Պոլիս ոտք չդնելու արգել-
քով , ա՛յնչափ տենչացուած ու ա՛յնչափ մօտե-
ցած Մէարիֆի մէջ 150 դրուչ ամբականով
պաշտօնէն զրկանքով :

Ո՛չ , Պարտիզակցի Սաչիկին պատմութիւնը
ասոնցմէ չէր , ու դո՛ւ էր զայն պատմելով ,
կրկնելով ամէն հարցնողի : Անով մեր ամե-
նուս վրայ տայտամ գերազանցութեան մը
գիտակցութիւնը կը հագնէր ու իրաւ ալ փա-
փաքներ կը ներշնչէր , փոխանակ մեր անդոյ
յանցանքներուն մեր վրայ ծանրացնող , մեզ
խորտակող կասկածին՝ գործած ըլլալու Սաչի-
կին յանցանքը զոր ինք , ձեւի համար , դեռ
կ'ուրանար :

Ունգաբանի Տօն ժուանը եղած էր Սաչիկ :
Լուացարար Թրքուհիի մը հետ մեղաւոր յա-
րաքերութիւններով կ'ամբաստանուէր : Ինքը
կը բացատրէր .

- Շաբաթը մէյ մը , ձերմակղէններս առ-
նելու կ'երթայի տունը , եւ կ'աւելցնէր .
- « Զաթը » մօրս ակը կ'նիկ մըն էր :
- Քանի՞ տարեկան . աղուո՞ր :
- Երսունը անցուկ . սանկ նանկ :

Այս ըսած ատենը ինքն ալ աշուրներովը կը
խնդար , բայց հարցաքննութեանը պահուն
այդպէս պատասխանած էր ու չէր կրնար չիմա
ինքզինքը հերթել :

Զորմանալի զուգողիպութեամբ մը , ճիշդ
վիւնոյն յանցանքով ամբաստանուած երիտա-
սարգ Հրէայ մըն ալ կար : Նիսիմ Սիրքէճիի
կողմը թուրք կին մը « կը սիրէ » եղեր եւ օր
մը բռնուելով կ'նոջ ազգականներէն՝ ծեծ մը ,
ծեծ մը , ետքն ալ բռնու քաշկրտուեր է : Նե-
սիմ իբրեւ պաշտպանութիւն յառաջ կը բերէր
թէ վաղուց մահմետականութիւն ընդունելու
դիտաւորութիւն ունէր , թէ պատրաստ էր հիմա
թրքանալ ու ամուսնանալ Թրքուհիին հետ :

Ասիկա կը բարկացնէր Սաչիկը , այս կեղ-
ծիքը որ իր մտքէն չէր կրնար անցնիլ , ո-
րուն երբեք ինք չպիտի գիջանէր .

— Ե՞րբ հաւատքի եկար . տիօցի՞ն տակը :
Մնաց որ Նիսիմ պատրաստուած էր քաղա-
քին . երկու փափաք միայն ունէր . առաջին՝
անձանկ քաղաք մը բարսորուիլ ուր կարենար իր

խաղախորդի արհեստը գործադրելու եւ երկրորդ՝ աքսորի տարածած պահուն՝ Սիրքէճիէն չանցնել :

* *

Թիբեկուն մը ընդարձակ սենեակին բարձր ու երկաթապատ լուսամուտներէն վար մուծը կը հոսէր, կը լեցնէր անկիւնները : Ծառ մը, այդ պատուհաններէն մէկուն անջեւ բուսած, իրիկուան զով զեփեւեփն ներքեւ իր սաղարթները կը շարժէր : Անոյ խարշափիւնը՝ մուծին ձայնը, մուծին շարժումին, սպրդումին ազմուկը ըլլալ կը թուէր : Կը սիրէինք այդ ծառը իբրև խորհրդանշանը Դուսին, բաց Օղին, Ազատութեան . . . : Մուծը կ'իջնէր, կ'ընկճէր, կը վախցնէր, դիշեր մըն ալ հոտ, աշխարհքէն ան մեր սիրելիներէն անջատ . մեր սրամաշուքին հեծ առանձին, ազտոտ անկողիններու վրայ լուսցնելու հարկին երկիւղով . . . : Իւրաքանչիւրը իր ոտնիկին երկուսեւ հացիքը գրկած, կտոր մը պանիր, քանի մը ձիթապառուզ քովը դրած՝ կ'աճապարէր այդ ճայն ալ վերջացնել, յուսալով, մաղթելով ինքնին որ անիկա վերջինը կ'ըլլար այս պատերուն մէջ :

Դիմացոյց, ջրհանկիր տաճիկ երիտասարդի մը հրաւիրեալն էր Սաչիկ, Պնակ մը լուբիա ու քանի մը հառ ձուկ ունէին զորոնք ախորժանքով, հացի խոշոր շերտերով կը լափէին : Վերջին պատուէն ետքը խնամով աւելցին փչրանքները ու քիչ մը աւելի բանալով վերմակը որուն վրայ նստեր էին, դէպի աւելի ետեւ, արմուկներուն վրայ ընկողմանեցան :

Յայտնապէս՝ յուզումի ու վերջուշուծի ժամն էր ասիկա : Սաչիկին անհոգ ու թեթեւ ձայնը հիմա ամփոփումի, արտամութեան թաւ շեշտ մը առեր էր : Իր ընկերին կը պատմէր նոյն օրը, եղբօրը հետ ունեցած տեսութիւնը, եղբօրը՝ զոր վշտացուցեր էր, որուն հետ տարիէ մը ի վեր չէին խօսեր եւ որ սակայն, իր բանտարկութեան լուրն առնելուն պէս վազեր եկեր էր, լալով իրարու գիրկ ինկեր էին, զինք սրտապնդեր էր, խոսասցեր էր իր ազատումին համար ամէն պէտքի դիմումները ընել ու մեկնելու ատենն ալ քիչ մը ստակ ձեռքը դրեր էր :

Եւ Սաչիկ կ'աւելցնէր .

— Ամբողջ վաստակս « ահպապ »ներու հետը

կ'ուտէի : Գիշեր եղած է որ, « վալլահ » երկու մէծիտիչէ ձգած եմ « մէխանա »ն : Ուր ես հիմա աղէկ օրի ատ ընկերները մէջերնէն մէկը չեկաւ, սա՛ « բաքէթ » ձեր « թիւձ թիւն »ը ա՛ն խմէ՛ չըսաւ . . . : Մարդուն եղբայրը, հոգիէն մարդը ուրիշ բան է եղեր . . . : Ջրհանկիլը կը հաստատէր Սաչիկին ընած ծը . ինքն ալ իր կարգին իր միւս բանտապահներէն դէպքեր կը պատմէր, մօրը՝ քորջը, իրենց սուրին նկարագրութիւնները կ'ընէր :

Եւ բնականօրէն Սաչիկ խօսեցաւ իր քաղաքին վրայ, Պաթիթիկի զաշտին, Ս. Մինասի վանքին եւ Քէթիի դէտերու ու « խպչախճի »ներու մէջտեղ պատահած կոիւնքերով շրջաբայ . . . : Շամօղլու աւազակին հանդիպումը խօլճիներուն հետ . . . ամբողջ գիւղը գնդ կ'երգէր անոր « տէսթան »ը . . . :

Եւ ինքն ալ երգեց այն տէսթանը . ձեռքը ծնօտին դրաւ ու երգեց . . . : Միօրինակ, երկար, հառաչաւոր ձայնի մը վրայ, իր խօսած տաճիկերէնովը պատմուած, շահատակութիւններ ան՝ Ազարին, որ իրիկուան մը դէմ, երկու ընկերներով զաշտին մէջ եօթը դէտերու էր պատահեր : Մինչեւ կէս գիշեր իրենց հրացաններուն զօրութեամբը կրկնապատիկ ուժի դէմ մաքառեր էին երեք կարիճները : Լսելու էր Ազարիկին գովարանութիւնը, անոր նախկին քաջագործութիւնները, անոր խրոխտ կոչերը դէտերուն . . . : Իւրաքանչիւր սրդին վերջը, երբ երգողը շունչ կ'առնէր, տաճիկ ընկերը յամբօրէն իր թմրութեան յուզումին խորէն կը յարէր .

Լա լա լա : Լան լան լան,
Ճա՛ն, սանա խուրպան :

Ուրիշ ոչ մէկ ձայն կը խանգարէր ստիւեւորոտ հմայքը սենեակին : Ամենքը՝ լուռ ու հեռաւոր, իրենց երազին մէջէն մտիկ կ'ընէին անոր :

Հիմա վերջնական, գերագոյն կոիւնք վայրկեանն էր, ու Սաչիկին ձայնը կ'ողեւորուէր, կը թրթորար՝ կարծես ցատումով ու հպարտութեամբ կը զողար . . . Իզնիմիտէն գումարտակ մը զօրք հասեր էր ու պաշարեր երեք քաջ « աշինկաճի »ներուն խումբը որ ծառի մը ետեւէն անզաղար կը կրակէր . . . Երկուստեք գնտակներու բոմբիւնը կը գողացնէր գիշերը ու վառօդին ծուխը հովին տրուած թեթեւ շղարչներու պէս օդին մէջ երկվայրկեան մը

Կը կախուէր ոչ կը Թուէր Հերթար: Ազար
 չեղանէ անկի մը լեզուս անկի ծուկը գեղը
 նին վրայ ու մարտինը ողբին չ մեշա նշան
 կ'առնէր: Դեպքերէն երեքը ու երկու գինուոր
 անշուշտ ստապալեր էին: Բնկերներէն ձէկը
 վերաւոր փոռած էր քոջից: Միւսն ալ չ աշա,
 կուրծքէն զարնաբեցաւ ոչ ինկու երեսին վը-
 րայու: Զինուորներու շրջակայը կը սեղ-
 մուէր հեռագետէ: Ազար խոստան վեր-
 ջին անգամ մը ըլլաւով լեզուց երկու փամ-
 փուշտներ: գրկեց հրացանը, ու հարցա՛ծ
 մը քարահայտն պէյը կ'իջար՝ զարնուած՝
 էր ձկէն: Յետոյ, հասցանկէ բունը գետին
 միւսը ու ջոնցաւ փողին վրայ: հաղի մկար
 բլթակին դպաւ ու երկրորդ գնաակը կը
 զարնէր աքի Ազարը ճակտէն, գետազատ
 գետին կը փակէր կըր զինուորէրը: վերջապէս
 մտակցած, դախ բունը կը կարծէին:

Վերջին հաստածը գերզացին ողբն էր Ա-
 զարին ու անոր ընկերներուն կանանց արե-
 լին ոչ զոգւած: Աչուղը կը հրաւերէր գերզա-
 րները ինչի Ազարը կը «օխ ջին մէջ
 ախ ծառին քովէն ի'անցնէին»:

Ու տաճիկ երիտասարդը վերջին անգամ մըն
 ալ կուրծքին խորէն հարաչեց իր յանկերը,
 նշուած չ իր կրակապղտաթեան մէջ
 միացնելով հայ հերոսը ու անոր հայ երգիչը:

Լաւ լաւ լաւ լաւ լաւ լաւ,
 ճան սանա խաբարացի:
 Տեսնանին հոսի չեւոր ինկու, մարկցալ
 հինա զոգէն մը մթնոլորտ սենեակին մէջ: Մութ
 անկիւնէս ուր զիս չէին տեսներ, ձեռքերս
 ամոզիմադրելի թափով մը ինքնին իրարու
 զարնուեցան ու ծափահարեցին հայ Բաջու-
 թեան, հայ կարիւ մը բնազդովան՝ ողբ մը,
 զոր գերզացի տղան հոս տաճիկ բանտի մը
 մէջ կ'երգէր:

Վ. ՏԻՐԱՆԵԱՆ

ԵՌՔ ԵՍԼԵՍՄԱՍԵՈՒԹԻՆԵՆԵՐ «ՔՈՐԱՅԷ»
 ԵՄԵ ԽՆԴՐՈՅՆ » ՄԱՍԻՆ

Պատմական «պեղածորան» գրքերը նախակ
 մը գրած են Վասն զայս քանանային ք արմէ
 կ'իմացուի թէ ի՞նչ է կ'այն «պալատները» ու
 բունց մէջ պ. թումանյան մեղադրած է զանոնք:

«Անգլէ են փոքրը իմ տեղ մը մէջ զանա-
 պան մէ: Իրեն եղբայրը տան մը մէջ չա-
 րաչար սպասաւորութիւն կ'ընէ չեղեկու պա-
 տառաքաղ մաքրելով, խեղճուկրակ վիճակի մը
 մէջ. ուրիշ մը դեղարանի դեղերը ձեռքի կառ-
 քով քիզէ տեղ փակագոհէ: միւս մը գործա-
 կալը թեան մը ձրարները քնաքալած պէ կ'ըր
 չէն ինչ կը տանի ուրի մը ֆայրեքայի մը
 մէջ գործաւորութիւն կ'ընէ: Տէր գրաչար
 ուրիշ մը աման լուսաւոր ճաշարանի մը մէջ
 եւ քիս ասոցից նման զգրեցի շարք մը շորոց
 վարձաւորութիւնը ինչիս ինչ անկառող է զիրենք
 ապրեցնել չախակա ու ինքնակա սպարոնկադ
 վիճակի մը մէջ կ'ըստուինք»:

Պ. թումանյանի հպատատութիւնը որքանոց
 մը չէ, ուրիշ բոլ սպարաւորները bureau de
 placement մը կ'արժէնատոր համար Պուրկա-
 ըրիսին: Պարկատանի շաքարներ քաշկրտե
 մինչև Լոնտոն եւ անգլիացի հալախէն չեղ
 քանկին դիմոյ մը ընկէ:

Իսկ թէ ի՞նչ է աչի ելանալը զրոյս: Թու
 մտակն «կը կը թէ» եւ գրեցը պէս ինչ որ աչ
 վարիւ կը գրեի խեղճ տղաքը միեւնոյն իս-
 մակիւն մէջ:

«Օրն ի բուն կը ջանար մեղ էլու չափ աչ-
 խառնել, գեղալի քաթաթ խոչնդոտ կանչելով
 մեր ինքնապաշտպան ամէն մէկ յամառ
 ջանքերուն: Այս մարտի գաղափար մը կազմե-
 լու համար, երկուկուսեցէ որ ամբողջ որբա-
 նոցին հոնա գործիքը կը կատարուէին մի-
 մեկին մէջ ձեռքով մանաւանդ վերջին երկու
 երեք տարեան ժամանակամիջոցին: Ինչպէս
 պարտիզպանութիւն... փրոտապալտութիւն եւ
 կատապանութիւն, որ յանձնուած էր 14 տարե-
 կան մտազայե մը, ողբուն միաքը այց նիխա-
 թէպէն մէջ գրեթէ փոքրելով մասաւորակն են
 տկար վիճակին ժամանուած է այսօր: Խոհարար-
 անկիւն լուսարարողութիւն եւ լուսաբարտու-
 թիւն յայտնէն ամբողջ տղոց ու ընտանիքին
 ամբնջեք լոպալ շորեկ եւ ամբողջ որբանոցը,
 Թումանյանի կնակարգին չքո մէկտեղ ալ ինչ
 մը քրէ ու լքուա: Ու այս անոցին աշխա-
 տանցէն վերջ մեր վրին կը ծանոանար եւ
 գրաչարութեան ու տպագրութեան անհետնում
 ու անտանիքի գործը եւս (1):

(1) Եւ ստիպուած ըլլալ չարի ու տղի
 «Պատանի»ի պէս անիմպոն թերի մը... ա-
 հաւոր չարչարանք: Ծ. Խ.

« Երևակայեցէք ուրեմն քրքայան հայր Եթէ այդպէս մեծ աշխատութիւններէ վերջէն նպէշ կրնաւ մեզ մտաւորապէս զպրագոյնէ որոշն համար մեզ բերպէ մասնաւորապէս խոստովաբար . եւ իր այլ խոցազմներէն ոչ մէկը չկատարելով հանդերձ , լաճախ յանդիմանութիւնք ալ ունեցաւ վաշտել ու լսել զանոնք որ իր խոստումը իրեն յիշեցնելու համարձակած էին :

Յետեւ՝ ք գիտնալ վերջապէս այն ձևը որով պ. Թումանյան գրաւ կը հաւաքէ իր որբացնեցիկ համար . պատասխիկ խոսողը միտորբերն էին :

« Այժմ հշատ ճիշդ է որ մեզ իտեւ մուրացկաններ թրթապահն Փեռն ու շաւարը վրանիս , 5 տարի շարունակ թափառաւ ջրկա աւուղներու պէս միթեւ կներու ամպիոնները բարձրագոյնէ լով մեզ շահագործած է , լուկ ին արծաթապատողիկն զպարզ տալու հպմար , եւ կրգերը զոր կ'երգէինք իբր զուտ հայկական երգեր Թումանյանի յայտարարութեամբ , բոլորն ալ թարգմանութիւններ էին պնդիկներէն հոգեւոր երգերուն . . . »

Արտասահմանի շատ մը թերթերը չամջան հրատարակել պ . Թումանյանի մէկ ինքնապաշտպանողական յօդոճածը , եւ ի այդ անբունը կը յայտարարէր թէ « իր ճակատքը բերտիւնովը վաստկած դրամովը » կը պահէ կղեր որբերը : « Ճակտի քրտիւնով » ըսելով արդե՞ք այդ զգուելի եւ ստորնացնող կամեակիքով թեան բոնադամեամ օրբերուն ամօթի քերտիւնքին կ'ակնարկէ պ . Թումանյան . . .

Ինչ կը թուի ինչ կրնայ տալ արդէն մարդ մը ձր ինքը պէնք ունի կը թեանում մարդ մը կրնայ թիթէ « գրի » թննել քսորվեցնել , Ինչպէս պ . Թումանյան կը պարծէր իր այդ վերջին յօդուածին մէջ , — երբ ինքը գրիչ բունը չի գտներ : Իր այս որբերուն , — որ ամենէն զարգացեալներն ալ են , — նամակները որոնցմէ հատուածներ արտասպեցինք , բաւական են ինքնին ցոյց տալու թէ այդ խեղճ տղաքը կոկիկ եւ ուղիղ աշխարհարար մ'իսկ չեն պիտեր դրել . իրենց նամակները շահեկան են նիւթովը , եւ ոչ թէ սոճովը :

Վերջին պահուն կ'իմանանք թէ ստուգուեր է որ տասնեւութը աղոցմէն , որոնց բոլորն ալ Թումանյան « իբր որբ » կը ներկայացնէր Եւրոպայի բոլոր գաղթականութեանց եւ դրամ հաւաքել կուտար այդպէսով : Ինչքը արք . չեն .

մին իբր խոնարար կը բերուի կղեր՝ ամսականով պ . Թումանյանի համար քաւրիւն մը , այդ տասնեւութին ընկերացող պատուելիին եղբայրն է : միւր կրիքը զգորական ծնողքներու զուակներէն , յետ իրենց ծնողքն են որ յանձնած են պ . Թումանյանին որպէս գի ուսուցիչ տասնոն յ . — մին վճարմամբ զ Պ. Վ. Գնական իրեն իրտեւէր շնանչնալով որգեգրել տղաք որոնք ծնողք ունեցչ այդ ճիշդ տղաքը յանձնել է պ . Թումանյանին ք պանելով միշտ իբր որգեղի միւսուպսերի քա , զորոնք կանանաւորապէս պիտի իր թէ . . .

Փաթիլի զաղթականներէն տմանք մտաղիբ էին անդիտիւն Վեճ թերթի մը մէջ հրատարակել այս խնայտառակութիւնները . մենք ետ կեցուցինք զիրենք այդ մտաղթութեանէն , խորհելով որ լաւագոյն էր խնդիրը լուծել մեր մէջ գոնէ ջանալ նախ ամէն միջոց անշուշտ մեր մէջ մեր քիտոն յաթը քեւալու համար ծառով եւ զարմանքով կ'իմանանք իր պ . Թումանյան ֆրանսական դպրատանի դիմել է : Այդ քայլին արդեւեք միմիայն ոչ . Ինչպէս ինչեւեք է որ կրնայ վնասել : — Եյ . Թումանյան , եթէ վճարու է իր դիմախի արդարութեան վրայ չպարտաւոր էր ընդունելի վնասաւորուէ քահաւանի ինչ որ արձակու զայնու անջուր լուծփէն տալու ք . Թումանյան պիտի չոչչու հայ ըմբռնելով թէ Հայերը այնքան պիտի երախտագէտ ըլլալ Պանչեանի եւ կամ կ'իտրոսի որբանոցը պահողներուն նման անշահախնդիր ու պարտածանաչ որբախնամներու , որբան պատճել , երբ կ'որդութիւնները անհերքելի փաստերով կը հաստատուին , այն անձերը որոնք որբեր չանագործելու աններելի յանցանքը կը զմրծեն :

ՀՐԵԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ ՄԸ

Հետեւեալ չափը կը կարգանք « Էօրոփէէն » ի վերջին թիւին մէջ :

« Աշխարհիս ամէն կողմը ցրուած չորս հարիւրէ աւելի հրէայ գիտուններ միաբաններ են ստեղծելու համար հանրագիտարան մը որ պարունակէ ամէն ինչ որ ունէ արնու թիւն ունի հրէական խնդրոյն հետ : Առաջին հատորը այս տարի լոյս տեսաւ Նիւ-Եորքի մէջ : 860 էջէ բաղկացած է եւ մինչեւ « Ափոքալիփսա » (Յայտնու թիւն) բաւը կը հասնի : Ատկից կալելի է զաղափար կալելի մեծութեան թիւը :

Printed and Published by the Proprietor, at the "Globe" Press, No. 13, Cross Street, Singapore.

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՀԻՏ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇՐՋԱՆԻՆ

ԱՆԱՀԻՏ պիտի շարունակէ հրատարակուել միեւնոյն ուղղութեամբ եւ միեւնոյն ծրագրով, գրական եւ գեղարուեստական բաժինն աւելի ճոխացած:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է:

Այն բաժանորդները որ գեռ չեն վճարած իրենց բաժնեզինը, կը խնդրենք որ փութան իրենց պարտքը հատուցանել: Իսկ յառաջիկայ տարի, «Անահիտ» պիտի ղրկենք միայն այն բաժանորդներուն որոնք կանխիկ պիտի վճարեն իրենց բաժնեզինը:

«ԲՈՂՈՆԻ ՆՈՒՅԳԱՍՆԻՒՆՆԵՐ» [«CONCERTS COLONNE»]

Ամէն կիրակի, Շաբաթի թատրոնին մէջ, — եւ ամէն հինգշաբթի՝ Նուվո-թէատր (մասնաւորապէս musique de chambre), — ֆրանսական եւ օտար զասական ու նոր երաժշտութեան ցերեկոյթներ՝ ճոխ յայտագրով:

RAFFI

CONTES PERSANS

Bibi-Scharabani — Les Khaz-Pouches

TRADUITS DE L'ARMÉNIEN
PAR
ABGAR IOANNISSIAN Y

LIBRAIRIE DE CH. NOBLET, 43, RUE CUJAS, PARIS

ԳԻՆ ՄԷԿ ՖՐԱՆՔ

Ունենալ փափաքողները պէտք է դիմեն՝

Թիֆլիս, Կեղրոնական Գրավաճառանոցին:

ԳԱՐԻԲԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

ԷԼԻ ՄԷՍ ԶՈՋ

Կոմպոզիտոր հինգ տարուածով

Բ. սպաղրութիւն

ԹԻՖԼԻՍ

Գին՝ մէկ ռուպլ

ԲժԻՇԿ ՎԱՀԱՆ ԱՐԵՐՈՒՆԻ

ԲՅՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ

Թիւ 5. — Դողերոցը կամ Մալարիա

Թիւ 7. — Մի՛ խմիր:

Գին . — Խրաքանչիւրը 5 կոպէկ

ԹԻՖԼԻՍ

POÉMES ARMÉNIENS, ANCIENS ET MODERNES

TRADUITS PAR

A. TCHOBANIAN

ET PRÉCÉDÉS D'UNE ÉTUDE DE

GABRIEL MOUREY

Գնել փափաքողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին:

LIBRAIRIE A. CHARLES: 8, Rue Monsieur-le Prince, PARIS.

ԱՆԱՀԻՏԻ ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԵՆԸ

Անահիսը կը հրատարակուի ամիսը անգամ մը :
 Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ
 2 տար (Ամերիկա) , 5 բուպլի (Ռուսիա) :
 Վեցամսեայ՝ 5 ֆր. (Ֆրանսա) , 6 ֆր. (օտար երկիրներ) , 1 տու. (Ամերիկա) , 3 բպլ. (Ռուսիա)

ԲՍԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :
 Ձեռագիրները ետ չեն գարձուիր :
 Կ'ընդունուին ազգեր :

Նամակ, յօդուած եւ բաժանորդագիրն ղրկել հետեւեալ հասցէին

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆԱՀԻՏ»Ի ԴՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Թիֆլիս —	Պարոն Գէորգ Մելիք-Կարաղեօղեան
Պաքու —	» Ս. Մ. Մոցիկեան
Ռուսճուք. —	» Նշան Ս. Թորոսեան
Ֆիլիպէ. —	» Ա. Տեմիրճիպաչեան
Պուքրէշ. —	» Արիս Լաղար
Դաւրէժ. —	» Տր. Կ. Փաշայեան
Իսթ Ուոթըրթաուն. —	» Կ. Մալխասեան
Ուոթըր. —	» Ա. Յովսեփեան
Չիքաղո. —	» Ա. Գարակալուրեան
Պոսթոն. —	» Ա. Փառազարդեան
Փրովիտէնս. —	» Օ. Տիրատուրեան